

# Հայեր միացե՛ք, միացե՛ք հայեր, Արցախն է մեզ կանչում, օգնության հասե՛ք...

Չորեքշաբթի  
25 մայիսի 2022թ.  
№ 10 (576)

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ  
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՔ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:  
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՊԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:  
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:  
(+374 91) 45 90 47  
(+374 77) 45 90 47  
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468  
2 1 0 1 0 >  
9 771829 346006

# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



## Սյունիքը պաշտպանում է Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը

### Ես նախագահ Շ. Միշելի կարծիքով՝ Արցախի Հանրապետությունն այլևս «Ղարաբաղի եթնիկ հայ բնակչություն է»

Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելը հայտարարությամբ է հանդես եկել Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի հետ եռակողմ հանդիպման արդյունքների վերաբերյալ:

«Այսօր ընդունեցի Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանին և Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևին: Սա այս ձևաչափով մեր երրորդ հանդիպումն էր: Մենք կենտրոնացանք Հարավային Կովկասի իրավիճակի և երկու երկրների, ինչպես նաև ավելի լայն տարածաշրջանի հետ ԵՄ-ի հարաբերությունները զարգացնելու վրա: Քննարկումն անկեղծ և արդյունավետ էր: Մենք դիտարկեցինք հարցերի ողջ փաթեթը: Մանրամասն քննարկել ենք



հունանիտար հարցերը, այդ թվում՝ ականազերծման, պահվող անձանց ազատ արձակելու և անհետ կորած անձանց ճակատագիրը պարզելուն ուղղված ջանքերը», – «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ ասված է Միշելի հայտարարության մեջ: Հայտարարության մեջ Շառլ Միշելը ներկայացրել է արդյունքները, որոնց հասել են քննարկումների ընթացքում:

**«Սահմանային հարցեր»**  
Առաջիկա օրերին միջպետական սահմանին տեղի կունենա սահմանային հանձնա-

ժողովների առաջին համատեղ նիստը: Այն կանդադարե՞նա բոլոր հարցերին, որոնք վերաբերում են սահմանագատմանը և կայուն իրավիճակի լավագույնս ապահովմանը:

**Հաղորդակցություններ**  
Ղեկավարները համակարծիք էին, որ անհրաժեշտ է առաջ գնալ տրանսպորտային կապերի ապաշրջափակման հարցում: Նրանք համաձայնության եկան տարանցման կարգավորման սկզբունքների վերաբերյալ՝ արևմտյան Ադրբեջանի և Նախիջևանի, Ադրբեջանի



### Արցախի Հանրապետության պետական օրհներգ

Ազատ ու անկախ Արցախ,  
Քո տուն-ամրոցը կերտեցինք,  
Պատմությունը մեր երկրի,  
Մեր սուրբ արյամբ մենք  
սերտեցինք:

Դու բերդ ես անառիկ,  
Բարձունք սրբազան, վեհ անուն,  
Մասունք աստվածային,  
Քեզնով ենք հավերժանում:

Դու մեր լույս հայրենիք,  
Երկիր, հայրենյաց դուռ սիրո.  
Ապրիր դու միշտ խաղաղ,  
Մեր հին ու նոր Ղարաբաղ:

Քաջերն ենք մենք հայկազուն,  
Մռավ ենք, Քիրս ենք ու Թարթառ,  
Մեր վանքերով լեռնապահ՝  
Անհաղթելի մի բուռ աշխարհ:  
ԽՈՍԵ՛Վ. Կ.ՅԱԿՈԲՅԱՆԻ  
ԵՐԱԺՇՏ՝ Ա.ՆԱՍԻԲՅԱՆԻ

տարածքով՝ Հայաստանի տարբեր մասերի, ինչպես նաև երկու երկրների հաղորդակցության ենթակառուցվածքների միջոցով միջազգային բեռնափոխադրումների շուրջ:

Նրանք համաձայնության եկան սահմանների կառավարման, անվտանգության, հողի վճարների, ինչպես նաև մաքսային սկզբունքների շուրջ միջազգային բեռնափոխադրումների համատեքստում: Փոխվարչապետներն այս աշխատանքն առաջ կտանեն առաջիկա օրերին:

#### Խաղաղության պայմանագիր

Ղեկավարները պայմանավորվեցին առաջ տանել Հայաստանի և Ադրբեջանի միջև ապագա խաղաղության պայմանագրի շուրջ քննարկումները, որով կարգավորվելու են միջպետական հարաբերությունները: Առաջիկա շաբաթների ընթացքում ԱԳ նախարարների գլխավորած թիմերը առաջ կտանեն այս գործընթացը: Սրան ի լրումն շեշտել են երկու ղեկավարներին, որ անհրաժեշտ է ապահովել Ղարաբաղի եթնիկ հայ բնակչության իրավունքներն ու անվտանգությունը:

#### Սոցիալ-տնտեսական զարգացում

ԵՄ-ն երկու կողմերի հետ կշարունակի Տնտեսական խորհրդատվական խմբի աշխատանքը, որի նպատակն է տնտեսական զարգացման ապահովումը՝ ի շահ երկու երկրների և նրանց բնակչությանը:

# Արևմուտքի դեսպանների սյունիքյան սերունդների ուշացած և կասկածելի շքերթը

Արցախյան երրորդ պատերազմի ողբերգական օրերին ջուրը բերանն առած արևմտյան դեսպանները շարունակում են հեռավոր այցելություններ կատարել Սյունիք ու մեր ցավերին կարեկից լինելու պատրաստ ստեղծել...

Օրումսեջ Սյունիք այցելող Լին Թրեյսին՝ 33-ում ԱՄՆ արտակարգ ու լիազոր դեսպանը, մայիսի 24-ին նորից մարզկենտրոնում էր: Նույն օրը Գորիսում էր ԵՄ դեսպան Անդրեա Վիկտորինը՝ Եվրոպայի օրվան նվիրված միջոցառումների առիթով: Առաջին հայացքից դրանք ողջունելի այցելություններ էին, սակայն...

Բազմաթիվ սյունեցիներ Արևմուտքի դեսպանների այդ կարգի այցելությունները վիճարկողական են համարում...

2020-ի աշնանային օրերին, երբ թուրք-արդրբեջանական-տեռորիստական հորդաները հարձակվել էին Հայոց աշխարհի վրա, երբ հայ խաղաղ բնակչության դեմ նույնիսկ արգելված գեյթ ու զինատեսակներ էին կիրառվում, նրանցից և ոչ մեկը ձայն-ծայտուն չէր հանում: Իսկ հիմա... Սյունիք այցելելով չեն էլ ուզում բառ անգամ արտաբերել մեր երկրամասից՝ պատերազմի կողմից հետպատերազմյան շրջանում բռնազավթված տարածքների մասին, չեն էլ ուզում խոսք ասել պատերազմում անհետ կորած ու գերեզմարկված մեր հայրենակիցների մասին, որոնց թվում նաև 13 սյունեցիներ կան: Այդ բոլորով հանդերձ՝ կարելի էր այս անգամ Սյունյաց, ինչպես նախորդ նման այցերի դեպքում, լուռ հայեցողի կեցվածք ընդունել, բայց...

ԱՄՆ դեսպան Լին Թրեյսիի Սյունիք կատարած այցի վերաբերյալ մարզպետարանի հաղորդագրության մեջ մասնավորապես նշվում է՝ «Դեսպանը կարևորել է հատկապես Սյունիքում զբոսաշրջության զարգացումը՝ նշելով, որ այս առումով մարզը մեծ ներուժ ունի, ու դա պետք է ներկայացնել մարդկանց»:

Անկեղծ լինենք՝ Սյունիքին առնչվող այսպիսի նախադասություն կարող էին մոգոնել միայն այլմոլորակայինները կամ երկրամասի հետ որևէ աղերս չունեցողները: Եվ ստիպված ենք տիկին դեսպանին հարց ուղղել. անշուշտ, Սյունիքը զբոսաշրջային մեծ ներուժ ունի, բայց չէ՞ որ 2020 թ. նոյեմբերի 9-ից և հատկապես դեկտեմբերի 18-ից հետո Սյունիքն այլևս կորցրել է այդ հնարքն ու ներուժը:

Պատասխանեք, խնդրեմ՝ ինչպե՞ս այցելեք, օրինակ, Սև լիճ, որը մեր լեռնաշխարհի ամենագեղատեսիլ վայրն է: Սոսիների պուրակի ո՞ր մասը կարող ենք վայելել 2022 թ. մարտյան հայտնի անեքսիայից հետո: Ո՞ր ճանապարհով գնանք Բղնոտ Նորավանք, որտեղ գտնվում են պատկերաբանողակայանի արվեստի բացառիկ նմուշներ պատմական հայոց աշխարհի մասշտաբով: Արդյո՞ք հնարավոր է այցելել Ուխտասարի ժայռապատկերների բաց թանգարան, որը եզակի հուշարձան է աշխարհի մասշտաբով: Կարո՞ղ եք երաշխավորել մեր անվտանգությունը, եթե կամենանք այցելել սահմանամերձ քրիստոնեական սրբավայրեր... Իհարկե, չեք կարող, թե չէ Իլիամը կնեղանա և ձեր հարավկովկասյան առաքելությունն անիմաստ կդառնա:

Եվ ուրեմն՝ եթե այդ վայրեր այցելելն այլևս հնարավոր չէ կամ ռիսկային է, ապա ի՞նչ զբոսաշրջության մասին է խոսքը, ինչպե՞ս հավատանք ձեր խոսքերի լրջությանն ու անկեղծությանը:

Հարցերի տեղիք է տվել նաև ԵՄ դեսպան Անդրեա Վիկտորինի գորիսյան ճեպագրույցը: Հարգելի դեսպանն այդպես էլ չի պատասխանել «Սյունյաց երկիր» հարցին, թե ինչպե՞ս է պատահում, որ տարիներ շարունակ ԵՄ-ի դրամաշնորհային մրցույթներում Սյունիքից նույն սուբյեկտներն են «հաղթում»: Ինչպե՞ս է ստացվել, որ ԵՄ-ի սյունիքյան աջակցության ծրագրերի շահառուները գրեթե նույն սուբյեկտներն են: Արդյո՞ք դա Սյունիքում սեփական «հինգերորդ շարքայում» ձևավորելու

Հարունակությունը՝ էջ 8

# Գերագույն հոգևոր խորհուրդը հանդես է եկել հայտարարությամբ

Գերագույն հոգևոր խորհուրդը, Նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, անդրադառնալով 44-օրյա աղետալի պատերազմից հետո Հայաստանի և Արցախի առջև ծառայած արտաքին ու ներքին մարտահրավերներին, աշխարհաբաղաբանական և տարածաշրջանային զարգացումներին, արձանագրում է՝

- Արդրբեջանական իշխանությունները շարունակում են իրենց դատապարտելի թշնամական վերաբերմունքը Հայաստանի, Արցախի և հայ ժողովրդի հանդեպ: Եռակողմ հայտարարության ստորագրումից հետո Արդրբեջանը պարբերաբար սադրանքներ է հրահրում Հայաստանի և Արցախի սահմաններին, թիրախավորում նաև խաղաղ բնակչությանը, շարունակում է պահել ռազմագերիներին, իր վերահսկողության տակ հայտնված տարածքներում ոչնչացնում և յուրացնում հայկական հոգևոր ու մշակութային ժառանգությունը,
- Աշխարհաբաղաբանական իրադարձությունների համատեքստում ՀՀ իշխանություններին և համազգային կառույցներին հարկ է զգուշացնել դրսևորել, որպեսզի Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքը սակարկման առարկա չդառնա,
- Խաղաղությունը չի կարող հաստատվել ազգային արժանապատվության նվաստացման հաշվին, հայրենի պետության տարածքային ամբողջականության հանդեպ չդադարող ոտնձգությունների, ռազմագերիների առկայության, Արդրբեջանի շարունակական սպառնալիքների և հայաստացույթյան քարոզչության պայմաններում: Խաղաղությունը պետք է հիմնվի իրադարձության, արժանապատվության և իրավունքների հարգման սկզբունքների վրա,
- Անկախ առկա ճնշումներից և արտաքին սպառնալիքներից, առավել ևս ներհասարակական բևեռացվածության պայմաններում ՀՀ և ԱՀ իշխանությունները հարկ է, որ չձեռնարկեն հայոց անկախ պետականությունը և Արցախի ապագան վտանգող բայլեր, չդրսևորվի զիջողականություն ազգի



հիմնարար իրավունքների և պատմական արդարության հետապնդման հանձնառության մեջ:

Գերագույն հոգևոր խորհուրդը, խիստ մտահոգված ստեղծված բարդագույն իրավիճակով, հայրենիքում տեղ գտնող ներքաղաքական զարգացումներով և ապավինելով Բարձրյալ Տիրոջ ողորմությանը և մեր ժողովրդի իմաստությանը, հորդորում է՝

- Առաջնային նկատել ազգային և պետական շահը, գործել խղճի մտքով և պատասխանատվությամբ, խնդիրների արժանապատիվ լուծումները փնտրել բացառապես մեր համընդհանուր կամարտահայտման ու համախոհության մեջ,
- Հայրենիքում, թե սփյուռքում ամենայն ջանք ի գործ դնել զորացնելու մեր ազգային միաբանությունը՝ վերացնելով պառակտող հատվածականությունը, լծվելու հայրենիքի հզորացմանը, միջազգային հարթակներում և ամենուր հետևողականորեն բարձրաձայնելու մեր ժողովրդի իրավունքների ոտնահարման մասին, հետամուտ լինելու Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչմանը և հատուցմանը, պայքարելու հանուն մեր ինքնության ու հոգևոր-ազգային արժեքների պահպանության,

- Ներքաղաքական գործընթացներում, խաղաղ հավաքներին, անկախ բաղաբանական հայացքներից կամ պաշտոնական գործառույթներից, դրսևորել հանդուրժողականություն, օրինապահություն, հարգանք միմյանց իրավունքների նկատմամբ՝ բացառելով որևէ տեսակի բռնություն, անհամաչափ ուժի կիրառում, սադրանք և օրինախախտություն: Ատելության խոսքը, վիրավորանքը և թշնամանքի հրահրումը երբեք բարիք չեն կարող լինել:

Գերագույն հոգևոր խորհուրդը կոչ է անում հավատավոր մեր աշխարհասփյուռ ժողովրդին շարունակել աջակից ու սատար լինել Արցախի մեր քույրերին և եղբայրներին և պատրաստակամ հանձնառություններով նպաստ ու ներդրում բերել Արցախի Հանրապետության զորացմանը, խաղաղ ու ապահով կյանքին:

Աղոթում ենք մեր երկրի խաղաղության ու առաջընթացի համար և հայցում Բարձրյալ Աստուծո օրհնությունն ու զորակցությունը մեր ժողովրդին: Թող հայրենիքի համար աղոթքը մշտափունջ լինի մեր ազգի զավակների շուրթերին:

**ՄԱՅՐ ԱՅԹՈՒՆԻ ՏԵՐԵՎԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

## Տարածաշրջանային սեմինար Կապանում

«Տարածաշրջանային միջև առևտրատնտեսական համագործակցության զարգացումը Եվրասիական տնտեսական միությունում» թեմայով սեմինարը մայիսի 12-ին մեկնարկեց Բաղաբուրջի հուշահամալիրում՝ Մեծ հայրենականում ընկած կապանցի զինվորների հիշատակը հավերժացնող հուշակոթողին ծաղիկներ խոնարհելով:

Սյունիքում տարածաշրջանային սեմինարի մասնակիցները Կապանի մշակույթի կենտրոնի նախասրահում ծանոթացան Սյունիքի կազմակերպությունների և անհատ ձեռներեցների արտադրանքն ու գեղանկարչներին ստեղծագործությունները ներկայացնող ցուցահանդեսին: Ծանոթանալուց հետո բարձրացան երկրորդ հարկ, որտեղ բացման խոսքով սեմինարի մասնակիցներին ողջունեց Կապանի համայնքապետ Պարոյանը: Համայնքի ղեկավարը համոզմունք հայտնեց, որ սեմինարն ազգային կհանդիսանա բնակարկող նախաձեռնությունների իրականացման համար, աշխատանքային հարթակ կդառնա ձեռներեցների և գործարարների համար՝ առաջավոր տեխնոլոգիաները և բարձր չափանիշներն արտադրության մեջ ներդրելու ճանապարհին, ինչպես նաև ուղի կհարթի տնտեսական ու մտավոր ներուժը լիարժեքորեն օգտագործելու նպատակով:

Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը ողջույնի խոսքում այն միտքը շեշտեց, որ տարածաշրջանային սեմինարը հնարավորություն է ընձեռնում ոչ միայն ճանապարհալու գործընկեր երկրների փորձին, այլև Կապան ժամանած հյուրերին: Նաև հույս հայտնեց,

որ սեմինարն օգտակար կլինի ոչ միայն փորձի փոխանակման առումով, այլև հյուրերին հնարավորություն կտա հաղորդակցվելու Սյունիքի տնտեսական ներուժի հետ: Մարզպետը կարևորեց հանգամանքը, որ սեմինարի երրորդ օրը քննարկելու են բնապահական հիմնահարցեր, և սեմինարի օրակարգում ներառված են «կապան» տնտեսության զարգացմանը միտված հեռանկարները:

ՀՀ տարածքային զարգացման և ենթա-



կառուցվածքների նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանն իր խոսքում ընդգծեց, որ Կապանը միջազգային առևտրի առումով ռազմավարական նշանակություն ունի և այն տարածաշրջանն է, որ կարող է իրապուրել Հայաստանի գործընկերներին:

Երկրորդ գործուն այն է, ասաց բախտյանը, որ սեմինարի մասնակիցներն ավելի մանրամասն կծանոթանան ԵԱՏՄ հարավային գործընկերությանը, մասնավորապես Կապանին, որտեղ նախկինում գործում էին մեկ տասնյակից ավելի միութենական ենթակայության

արդյունաբերական ձեռնարկություններ, ինչը բարերար հետք է թողել բաղաբային միջավայրի, բաղաբային մշակույթի և երիտասարդության վրա:

– Մտածում ենք վերականգնել նախկին կորստարտիվ կապերը՝ դրանք հագեցնելով նոր բովանդակությամբ, – ասաց փոխնախարարը:

Վ. Տերտերյանը հույս հայտնեց, որ հաջորդ նման սեմինարն ավելի ներկայացուցչական կլինի՝ միջպետական կապերն ավելի սերտ դարձնելու համար:

«Սյունյաց երկիրը» սեմինարի առաջին նիստի ավարտից հետո խնդրեց ԵԱՏՄ ռազմավարական տնտեսական քաղաքականության բաժնի պետ, մակրոտնտեսության մասնագետ Անդրեյ Պատելեյնիկին՝ համառոտ տալ իր գեղուցման եզրությունը: Ի պատասխան նա ասաց՝ «Ես փորձեմ ներկայացնել այն հնարավորությունները, որ ընձեռնում է ԵԱՏՄ-ն տարածաշրջաններին, այդ թվում՝ Հայաստանին: Ուզում եմ բոլորին տեղեկացնել, որ Հայաստանի գործարարները կարող են ազատորեն առևտուր անել ԵԱՏՄ բոլոր երկրներում, ավելի ստույգ՝ ձեզ հարկ չի լինի վճարել լրացուցիչ հարկեր, ձեզ համար այնպիսի պայմաններ են ստեղծված, ինչպես ռուսաստանցիների համար:

Եթե դու բժիշկ ես, համեցեք, կարող ես քո մասնագիտական ունակությունները դրսևորել, եթե ուզում ես վարսահարդարան սրահ բացել, խնդրեմ, Ռուսաստանում, Բելառուսում՝ ոչ մի խնդիր չկա: Եթե դու որևէ փաստաթուղթ ես ձեռք բերել Հայաստանում, դա ընդունելի է միության բոլոր երկրներում»:

Սեմինարն աշխատանքները շարունակեց մայիսի 13-ին, որոնք բնապահական թեքում ունեցավ:

**ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**



### «ԶՊՄԿ» ընկերությունում մեկնարկել են աշխատակիցների մասնագիտական գիտելիքների, ունակությունների, հմտությունների ստուգման և գնահատման աշխատանքները

Արտադրական գծով տնօրենի տեղակալ Արտակ Ղուկասի խոսքով՝ «ԳեոՊրոՄայնինգ» ընկերախմբի որդեգրած սկզբունքներից է՝ մշտական գործող հանձնաժողովի միջոցով ստուգել աշխատակիցների մասնագիտական կարողությունները, ապահովել առաջընթաց: Այն աշխատակիցները, ովքեր պրակտիկայից զատ ունեն նաև տեսական հիմնարար գիտելիքներ, կարող են մասնակցել քննություններին՝ տարակարգի և աշխատավարձի փոփոխման նպատակով: Նախապես տրամադրվում են տեսական նյութերը, որոնց հիման վրա էլ կազմված են քննական տոմսերը: Առանցքային են նաև աշխատանքի անվտանգության կանոնների պահպանմանը վերաբերող հարցերը: Օրերս հարստացուցիչ ֆաբրիկայի

շուրջ 30 աշխատակից մասնակցեց քննություններին՝ ապահովելով հիմնականում դրական արդյունքներ: Արտադրամասի տեխնիկական կանոնակարգման կառավարչության I տարակարգի հսկիչ Ֆոփիսիմե Թումանյանը միակն էր մասնակիցներին, ով փայլուն մասնագիտական գիտելիքների շնորհիվ միանգամից ստացավ III տարակարգ: Մեկ ուրիշ աշխատակից՝ ինքնամանրացման տեղամասի I տարակարգի հսկիչ Ռուզաննա Կարապետյանը, ստանալով II տարակարգ, հավելեց, որ ոգևորիչ են նման հնարավորությունները, նաև՝ պարտավորեց-նող... Գործընթացն ընկերությունում շարունակական բնույթ կկրի:

### «Ոսմար» ճանապարհաշինական ընկերությունը վաճառվել է պատճառները չեն հանրայնացվում

Գործի ամենահին ճանապարհաշինական ընկերության հիմքերի վրա 2003-ին ստեղծված «Ոսմար» ՍՊ ընկերությունը բացառիկ ներդրում ունի Գործի տարածաշրջանի ճանապարհների, այդ թվում՝ տարածաշրջանով անցնող միջպետական ու հանրապետական նշանակության ճանապարհների պահպանման ու շահագործման գործում: Ավելի ճիշտ՝ հնարավոր չէ խոսել վերջին 80-90 տարիների գործի ճանապարհաշինության մասին՝ առանց հիշատակելու վաստակաբեռ այդ կազմակերպության անունը:



Ավելին, «Ոսմար»-ն անցած ձմռան ընթացքում արեց հնարավորը՝ Կապան ձգվող Նոր մայրուղու՝ Հինուհայրի խաչմերուկ-Տաթև-Քաշունի խաչմերուկ հատվածն ամենաճանաչատ օրերին անգամ անցանելի պահելու համար, ինչին քանիցս ականատես եղանք:

«Ոսմար»-ի կենսագրության մեջ մի նոր և անսովոր էջ էր հետպատերազմյան 2021 թվականը: Ընկերությունը, կարելի է ասել, ամենամեծ կորուստներն ունեցավ 2020 թվականի նոյեմբեր-դեկտեմբերյան կապիտուլյացիայից հետո: Արդրեջանը բռնազավթել էր Որոտան գյուղին հարող տարածքները, որտեղ էլ գտնվում էր ընկերության ասֆալտետոն պատրաստող գործարանը: Ընկերության սեփականատերն ուժ գտավ իր մեջ և կարողացավ 2021-ին (բռնազավթված գործարանի փոխարեն) մի նոր և հիմնալի գործարան կառուցել Հինուհայրի խաչմերուկում:

Սակայն օրեր առաջ տեղի ունեցավ անսպասելի. «Ոսմար»-ի սեփականատեր Նելսոն Ոսկանյանը վաճառեց շահութաբեռ ընկերությունը, որը տարածաշրջանի ամենախոշոր գործատուներից էր:

Ընկերությանը վստահվեց Տաթև-Կապան մայրուղու ամենադժվար՝ Աղվակի-Շրվենանցի խաչմերուկ հատվածի կառուցումը:

Գործում տեղի ունեցածը համարում են ոչ բնական, ինչ-որ առումով անբացատրելի իրողություն: Եվ, բնականաբար, բազում վարկածներ են շրջանառվում ու հարցեր բարձրաձայնվում:

Այդ առիթով բազմաթիվ տարակույսներ հնչեցին հանրապետության ամենատարբեր հարթակներից՝ ինչպես՝ ստացվեց, որ ճանապարհաշինական այդ մեծ ծրագիրը վստահվեց «Ոսմարին»:

Ընկերության արդեն նախկին սեփականատեր Նելսոն Ոսկանյանը, ով մեծ ճանաչում ունի Սյունիքում, նաև փորձառու ճանապարհաշինարարի համբավ, չջանկացավ ընկերության իրական վաճառքի դրոպապատճառները ներկայացնել-մանրամասնել: Հաստատեց միայն՝ «Ոսմար»-ը վաճառվել է շարժական և անշարժ ամբողջ գույքով...

Մենք երբեք չենք խորացել այդ հարցի մեջ և հիմա էլ չենք ուզում փորփրել: Դա, բոլոր տարակույսներով հանդերձ, վկայություն էր այն բանի, որ ճանապարհաշինական այդ ընկերությունը վստահություն է ներշնչել և ունեցել է կադրային, տեխնիկական-տնտեսական բոլոր հնարավորությունները՝ կառուցելու դժվարին այդ ճանապարհը: Ու դա ճիշտ լուծում էր, ինչպես հետագա ընթացքը ցույց տվեց:

Ի՞նչ է, այնուամենայնիվ, կատարվել «Ոսմար»-ի շուրջ. դատական բազում փորձությունների միջով անցած և փառահեղ կենսագրություն կերտած, շահութաբեռ ընկերությունը հենց այնպես չէին կարող աճուրդի հանել, Սյունիքի մարզի ամենափորձառու ճանապարհաշինարարներից մեկին՝ Նելսոն Ոսկանյանին, հենց այնպես չէին կարող դուրս մղել...

Եվ իսկապես՝ 2021-ի աշնանն ընկերությունը կարողացավ ավարտին հասցնել ծրագրի առաջին փուլը, որի շարունակությանն ականատես պիտի լինեինք այս օրերին...

## Դարձյալ Լաչինի միջանցքի մասին. հայացք Կորնիձորից

Սահմանապահ Կորնիձորը ռազմավարական առանձնահատուկ դեր ունի հայ-ադրբեջանական այժմյան շփման գծում: Գյուղի անմիջական հարևանությամբ արդրեջանական մի բանի դիրքեր են, որոնց դիմաց (հուրախություն մեզ) մեր մարտական հենակետերն են...

վալ հողային աշխատանքներ են իրականացվել և իրականացվում:

Կորնիձորը վերջին շրջանում ձեռք է բերում մեկ այլ կարևոր նշանակություն ևս. գյուղի վարչական տարածքի արևելյան մասում ստեղծվեց Է Զայաստանի Զանրապետությանը միանալու Արցախի հետ ցամաքային (տրանսպորտային) կապն ապահովող նոր միջանցք կամ միջանցքի նոր երթուղին, որը փոխարինելու է ներկայումս գործող երթուղուն: Նոր միջանցքը կամ միջանցքի նոր երթուղին կառուցվում է Զայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի ղեկավարների 2020թ. նոյեմբերի 9-ի հայտարարության համաձայն:

Կորնիձորի տարածքից այդ ամենը դիտվում է, լսելի է նույնիսկ ճանապարհաշինական տեխնիկայի հռնդունը...

Այդ փաստաթղթի 6-րդ կետում նշվում է՝ «Կողմերի համաձայնությամբ, Լեռնային Ղարաբաղի և Զայաստանի միջև կապն ապահովելու համար առաջիկա երեք տարիների ընթացքում պիտի հաստատվի Լաչինի միջանցքի երկայնքով նոր երթուղու կառուցման նախագիծ, որից հետո ռուսական խաղաղապահ զորակազմը կվերատեղակայվի՝ այդ երթուղին պաշտպանելու համար»:

Թե Արցախի Զանրապետության որ տարածքներով է երթուղին հասնում Զագարի գետի ձորահովիտ՝ տեղյակ չենք: Չենք կարող ասել նաև, թե Զագարի գետի վրա կառուցվող կամրջից հետո մայրուղին ինչ երթուղի կունենա և որտեղ կմիանա գործող ճանապարհին: Եվ ուրեմն՝ առայժմ դժվարանում ենք ասել, թե ճանապարհային նոր երթուղին գործնականում ինչ ազդեցություն կունենա Արցախի Զանրապետության արևմտյան հատվածի բնակավայրերի, ինչպես և Կորնիձորի վրա:

Հիմա այդ նոր երթուղին կառուցման ընթացքի մեջ է, ինչի համար Ադրբեջանը ճանապարհաշինական մեծաքանակ տեխնիկա է գործի դրել...

Միևնույն ժամանակ արդեն իսկ հստակ է՝ նոր երթուղին անհնար է դարձնելու գոնե հեռվից դիտելու հայոց սրբազան Շուշին, ինչն արդեն վատ է: Այնուհետև՝ նոր երթուղին անորոշ է դարձնելու Բերձորում և մերձակա գյուղերում ներկայումս բնակվող մեր հայրենակիցների ճակատագիրը...

Միջանցքի նոր երթուղու շինարարությունը հասել է մինչև Զագարի գետ, իսկ մինչ այդ՝ արևելյան բարձունքներից սկսած, լայնածա-

Կորնիձորի և ադրբեջանական համարվող տարածքի բաժանարարը Զագարի գետի ձորահովիտն է:

Գետի աջակողմյան ափին են գտնվում Կորնիձորի մոտ 20 հա այգիները, որոնք, արդեն երկու տարի է՝ չեն մշակվում, ավելի ճիշտ՝ երկու-երեք ընտանիք է միայն համարձակվում մշակել իրենց պատկանող այգիները:

Ու, այդքանով հանդերձ, Զագարի գետի ձորահովիտում կորնիձորցիների անասնա-

տերն էին տարածված մայիսի 15-ին, երբ այցելեցինք այդ վայրեր...

Ձորահովիտից էլ հաճելիորեն լսվում էր կորնիձորցի Մայիս Դավթյանի շվիի ոյութիչ մեղեդին:

Մայիսը մեզ ծանոթ է դեռևս Արցախյան 3-րդ պատերազմի օրերից. նրան բանիցս տեսել ենք Տեղ-Կորնիձոր պաշտպանական գծում՝ զինվորականների համար շվիի բաղրալուր երաժշտությունը շաղ տալիս:

Կորնիձորը տնտեսական առումով Սյունիքի ամենահարուստ և կենսունակ գյուղերից է՝ 220 ընտանիք, մոտ հազար բնակիչ, 1200 հա վարելահող...

\*\*\*

Ըստ ադրբեջանական լրատվամիջոցների՝ Զայաստանն Արցախի հետ կապող նոր ճանապարհը կսկսվի Գործի Կորնիձոր գյուղից, կանցնի արցախյան Հին շեն և Մեծ շեն գյուղերով, ապա կմիանա Եղցահող ու Լիսագոր ավտոճանապարհին: 32 կմ երկարությամբ ճանապարհին, ըստ երևույթին, ռուս խաղաղապահները կհսկեն: «Լաչինի միջանցքի» փոխարեն հաղորդակցային նոր ճանապարհ կառուցելու դրույթը նոյեմբերի 9-ի հայտարարության 6-րդ կետի երկրորդ պարբերության մեջ է ամրագրված, ըստ որի՝ 3 տարվա մեջ պետք է նոր ճանապարհի նախագիծը հաստատվեր, այնինչ, ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, 2022-ի ամռանը (մի քանի ամսից) ադրբեջանցիները ամբողջ մայրուղու կարմիր ժապավենը կկտրեն, ինչից հետո Զայաստանը կորցնելու է Բերձոր բաղաթի, Աղավն ու մի քանի այլ գյուղերի նկատմամբ վերահսկողությունը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ճանապարհի շահագործումից հետո տեղում բնակվողները ստիպված են լինելու լքել իրենց տները: Այս մասով փորձեցինք Արցախի անվտանգության խորհրդի բարտուղար Վիտալի Բալասանյանից մեկնաբանություն ստանալ, բայց՝ ապարդյուն: Թե Աղավնոյի ու մյուս գյուղերի, թե, առհասարակ, Բերձորի ու Արցախի տարածքների հետագա ճակատագրի մասով առաջնային պատասխանատուների թվում հենց Բալասանյանն է, որն էլ, ըստ մեր տեղեկությունների, այս պահին ադրբեջանական կողմի հետ միակ բանակցողն է Արցախից:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Աղավնոյի գյուղապետը համոզմունք հայտնեց, որ գյուղը լքելու կամ տներն ազատելու մասին իրենց որևէ մեկը որևէ խոսք չի ասել, նախազգուշացում չի եղել: «Ամեն օր էլ տեսնում ենք ճանապարհի վրա աշխատող ադրբեջանցիներին, բայց մեզ ոչինչ չեն ասել, մենք էլ չենք պատրաստվում լքել մեր տները, եթե անգամ ասեն: Երևի գիտեն՝ եթե ասեն էլ, զենք ենք վերցնելու, մնանք: Ինչ վերաբերում է նոր կառուցվող ճանապարհին, ապա ավելի լավ, թող կառուցեն. ազատագրելիս հեշտ կլինենք», - նշեց նա:

Թե իրականում ինչ կլինի Բերձորի ճակատագիրը, պարզ կլինի մոտ ապագայում վերոնշյալ ճանապարհի շահագործումից հետո: Հստակ է մի բան՝ պատկան մարմինները, պաշտոնյաները ու, մեծ հաշվով, ՀՀ բաղաթիցիները թմբիկից կարթնանան միայն այն ժամանակ, երբ բանը բանից անցած կլինի:



# Վերջին խելքի ժամանակը կամ ելք ճգնաժամից



**ԴԱՎԻԹ ԳԱՏՊԱՐՅԱՆ**  
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Սովետ խորհրդի անկումից հետո հիշում է որպես «փոքր ածու», բայց ինչպե՞ս եղավ, որ այդ «փոքր ածու»-ն 2021 թ. հունիսի ընտրություններին ասպարեզ հանեց 33 վարչապետի 25 թեկնածու, որոնցից 13-ը հազիվ հաղթահարեցին գրո տոկոսի շեմը, իսկ 6-ը՝ 1 տոկոսի: Սա խորքում նշանակում է փոխադարձ անվստահություն, ինչն էլ, ահա, հասցրել է քաղաքական ուժերի ջլատման, տրոհման, մասնատման ու հակադրման: Սա արդեն եղավ ոչ թե «փոքր ածու», առաջադրված թեկնածու, այլ՝ կատարածու, համարյա թե՛ ծաղրածու: Ուրեմն՝ 25 կուսակցություն ու դաշինք, մեկը մյուսին չվստահելով, ավելին՝ վարկաբեկելով, մրցապայքարի են ելել՝ Հայաստանը փրկելու: Խե՛ղճ Հայաստան:

Մինչդեռ բնականոն այն պետք է լիներ, որ այդ 25-ի փոխարեն ընտրություններին մասնակցեին 3, առավելագույնը՝ 5 քաղաքական ուժ: Իսկ այդպես չէր, որովհետև մեր անխոհեմ գործելանոցով քաղաքականությունն այսօր իջեցրել ենք փողոցի աստիճանի, այն մտել է յուրաքանչյուր ընտանիք, տուն ու համայնք և պառակտել բոլորին, հանել իրար դեմ, ինչի պատճառով յուրաքանչյուր ոք ուզում է դառնալ քաղաքական դեմք, անգամ քաղաքական գործիչ ու առաջնորդ:

Այսպես չի լինի, որովհետև ոչ մի կերպ չի բխում գլխավորից, որն ազգային շահն է:

Մոտ երկու մլն վեց հարյուր հազար ընտրողից ընտրություններին մասնակցել է շուրջ մեկ մլն հարյուր յոթ հազարը՝ կեսից մի քիչ պակաս, որը վատ ցուցանիշ չէ, և վերստին խոսում է ոչ միայն մեր պարտաճանաչության, այլև մեր քաղաքականացվածության մասին: Քաղաքականացված ասածը նույնն է, ինչ ելելուհարկավորը...

Արտահերթ ընտրությունները տեղի ունեցան պատերազմում կրած պարտության հետևանքով: Դա ծանր հետևանք է, ոչ թե արդյունք, իսկ պատճառն ուրիշ տեղ է: Այդ իսկ նկատառումով հարցը որոշակի պետք է դնել՝ ինչու՞ պարտվեցինք:

Պարտվեցինք՝ որովհետև հեռացանք ազգային արժեքներից, և եղան «գործիչներ» ու «լրագրողներ», ովքեր ծաղրեցին ազգային շահը, բուն հայկականությունը: Ընդամենը՝ անցավ տարի այս ժամանակ հանրային բնակարան էին ներկայացված դպրոցական դասագրքերի չափորոշիչները: Եվ հարվածն առաջին հերթին իջավ հանրակրթական դպրոցում դասավանդվող հայագիտական առարկաների վրա՝ հայ գրականություն, հայոց պատմություն, հայ եկեղեցու պատմություն: Ինչու՞, որովհետև այդ առարկաները կրում և փոխանցում են ազգային հիշողություն, որը փորձում են ջնջել: Մաթեմատիկան, ֆիզիկան, քիմիան ամեն տեղ նույնն են, այլ բան է դասավանդման որակն ու նյութական հագեցվածությունը: Բայց հայ գրականությունը և հայոց պատմությունն այն առարկաներն են, որոնք հայ աշակերտի մեջ դաստիարակում են ազգային ինքնություն: Դա է պատճառը, որ օտար երկրների հայկական դպրոցներում, օրինակ՝ Վրաստանում, հայոց պատմությունն առարկան չեն դասավանդում: Պատմական հիշողությունից զուրկ մարդը հայտնվում է մտավոր անկշռելիության մեջ:

Նախարարի և փոխնախարարի մակարդակով մերոնք ևս փորձեցին ջնջել՝ անգիտա-նալով պարզ ճշմարտությունը: Եվ ի՞նչ էին հրամցնում դրա փոխարեն՝ հիշողության կորուստ, մանկություն, հենց այն՝ ինչը պետք է հասցնել ամոթալի պարտության: Ահա դրանից հետո հասկանալի դարձավ նախարարին ավելի վաղ ներկայացված առաջարկի մերժումը: Առաջարկությունը՝ Երևանում բացել արևմտահայերենով ուսուցմամբ հանրակրթական դպրոց: Նախարարի պատասխանը՝ «կղառնա գետտո»: Մինչդեռ Սիրիայից, Լիբանանից, Իրաքից հայրենիքում հաստատվել փորձող հայերին դա կրթավեր, կմնային և ոչ թե կհեռանային: Եվ հետո, էլ որտե՞ր, եթե ոչ հայրենիքում պետք է տեր կանգնենք մարմող գրական արևմտահայերենին: Հարկ եղած դեպքում հիշում ու հիշեցնում ենք, որ ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ արևմտահայերենը մեռնող լեզուների շարքում է: Արևմտահայաստանը կորցնելուց հետո հիմա էլ արևմտահայերենի՞ն հրաժեշտ տանք: Ո՞վ պետք է մեր ցավին դարձան անի, եթե ոչ մենք՝ այդ հարստության իրավատերերը, որ Սահմանադրությամբ հայտարարում ենք՝ Հայաստանում պետական լեզուն գրական հայերենն է: Իսկ գրական հայերենն ունի երկու ճյուղ՝ գրական արևելահայերեն և գրական արևմտահայերեն:

Այս հարցերի մասին մտահոգվելու փոխարեն ժողովրդի ուշադրությունը շեղեցին՝ ստանալով դարձած կնոջ մասին ֆիլմ ցուցադրելով և հպարտանալով, որ ծախքերը իրենք են հոգացել: Իսկ շատ չանցած՝ «Հանրապետություն» մետրոյի կայարանի բացօթյա հրապարակում «բեմադրեցին» ինչ-որ սեռաճարակ «Հուզանք ու գանգ»: Կարծես Հայաստանն ամեն հարց լուծել էր, մնում էր սեռական շեղումներ ունեցող մի բանիսի հաճույքն օրինականացնելու հարցերը լուծել: Սեռական շեղում ունեցող հիվանդն ավելի մտահոգության առարկա է դարձել, քան սոցիալական, առողջապահական, կրթական շեղումներ ունեցող շատերը:

Հայրենիքը տոկոսն զինվորի պահանջ ուներ և ունի, իսկ սրանք՝ «Հուզանք ու գանգ»: Այս գրքի հեղինակ Ազատ Վշտունյան դեռ ժամանակին՝ 1923 թվին են ասել՝ «Հուզանքը չուզանք» (չենք ուզում): Այս և այս կարգի ծախքերը մեր ընտանիքները ցանկացան ներկայացնել որպես երևույթ, ամոթ է ասել՝ հեղափոխության նվաճում: Բայց ազնիվ մասնագիտական դիմադրությունը կանխեց հետագա ավերածությունները: Այս ամենից հետո հրապարակվեց պահանջվեց ԿԳՄՍ նախարարի հրաժարականը, և նա, դիմադրելով հանդերձ, պաշտոնակն արվեց: Երբ նախարարը դասագրքերի չափորոշիչների հարցում փորձում է մեղմել աղմուկը՝ պահպանելով ընդունված արժեքները, բայց և փորձարկման կարգով մարդերում շրջանառության մեջ է դրել նաև մերժված ծրագրի նմուշները:

Մեր պատմաքաղաքական իրավիճակի բերումով մենք այն ժողովուրդը չենք, որ մեզանից օտարները գործով ստեղծված և ստուգված արժեքները, այլ կերպ՝ ձեռք բարձրացնենք մեր մշակույթի վրա: Մշակույթը ոգեղեն բանակ է: Եվ այս 44-օրյա պատերազմում պարտվեցինք, որովհետև զբաղված էինք ժողովրդի ոգեզրկությամբ, հոգեկերտվածքի ավերումով: Ազգային ոգու անկումը դարձավ պարտություն պատերազմի դաշտում: Մի բան, որ Արցախի ազատագրման տարիներին այլ էր՝ ոգի՛ն հաղթեց: Այն ոգին, որ կերտել էին Թումանյանն ու Կոմիտասը, Թամանյանն ու Սարյանը, Չարենցն ու Խաչատրյանը, Ծիրազը, Սահյանն ու Սևակը:

Եվ հետո՞ այդ՝ մեր կյանքում արմատավորվել են բազմաթիվ հոռի բարքեր, որոնք պետք է արմատախիլ անենք, դրա համար պետք է վերացնել հոռածին միջավայրը, հարաբերությունների անբարոյ դրվածքը: Բայց դա չի նշանակում, թե կցցի հարված պետք է իջեցնել Արցախն ազատագրած հերոսների գլխին: Այն, որ այդ հերոսները նաև հոռացան՝ ակնհայտ է, բայց դրա համար կա օրինականության պահանջ, որին ենթակա են բոլորը: Նպատակը պետք է լինի, ոչ թե մար-

դուն փչացնելն ու ոչնչացնելը, նրա հանդեպ ծաղրածանակը հանդիսանալի վերածելը, այլ նրան օրենքով և օրինականությամբ վերահսկելը, որպեսզի ամեն ինչ չհասնի բաժնի թողության ու ասնձարձակության:

Նույն կերպ գործարար մարդկանց հանդեպ ևս վերաբերմունքը պետք է լինի նպաստող և օրինական: Չար նախանձն այստեղ անելիք չունի: Մի լավ գործարարը երկրին նույնքան անհրաժեշտ է, որքան մի լավ գործը:

Այն հասարակությունը, որն իր ազգային հերոսի վրա ձեռք է բարձրացնում, այլևս հերոս չի ունենա: Իրար ճիշտ հասկանալի՝ ազատագրական պատերազմի հերոսին պետք է արժանին մատուցել, հանցագործին՝ պատժել:

Եվ կամ ի՞նչ է նշանակում վիրավորել Վերափառ հայրապետին, երբ նա, անկախ մարդկային թուլություններից, մեր հավատի խորհրդանշանն է: Եվ դա այն դեպքում, երբ Հայաստանը լքված է ազգուրաց ամեն տեսակի աղանդներով, որոնք դեմ են բանակին, ազգային արժեքներին, հայկականությանը և օտար ծառայությունների գործակալներ են: Նման դեպքում հայոց եկեղեցին եղել և մնում է հոգևոր պատվար և այն պետք է պահպանել ու պաշտպանել:

Ոգին պարտվեց, որովհետև հարցեցին սուտը, կեղծիքը, խաբեությունը, որ հասել է պետական հռետորաբանության աստիճանի: Իր վարչապետ եղած տարիներին Տիգրան Սարգսյանը հայտարարում էր, որ Յուրիս-հարավ ճանապարհը պատրաստ կլինի 2017-2018 թթ., Մեդրիում կկառուցվի նավթամշակման ձեռնարկություն, Հայաստանը երկաթգծով կկապվի Իրանի հետ: Ո՞ր է... Ինչու՞ Տիգրան Սարգսյանը և նրա նման հռետորաբան ղեկավարները պատասխան չեն տալիս: Մեր աչքի առաջ չէ՞ր, որ Արծրուն Հովհաննիսյանը պաշտպանության բանակի անուկից սուտ տեղեկատվություն էր հաղորդում պատերազմի մասին՝ խոսում դիբրային անկապ տեղաշարժերից: Այնքան ստեց, որ վերջին օրը ամոթից կորավ տեսողաշողից: Մինչդեռ աշխարհի հայությունն իրական լուրերի էր սպասում: Մեր աչքի առաջ չէ՞ր, որ Երևանի գլխավոր ճարտարապետ, երգիչ Մեսչյանը, մետրոյի Աջափնյակի գիծը գործարկելու, Լորքի երկրորդ գանգվածը ճուպա-նուղիով կենտրոնի կապելու՝ «շատ իրական» ծրագրերից էր խոսում: Խոսեց, խաբեց և աննկատ հեռացավ ասպարեզից:

Իսկ մեր դիվանագիտությունն ասես քնած լինի: Այսբան ժամանակ՝ 1988-ից սկսած՝ արդեն 33 տարի, աշխարհին չկարողացանք համոզել, որ Արցախը Հայաստան է, իսկ ՌԴՆ նախագահ Պուտինն առանձն կրթերազմների՝ ուղղակի հայտատարեց. «Ղարաբաղը Ադրբեջան է»: Այսբանից հետո ի՞նչ բարեկամության մասին է խոսքը: Մինչդեռ այդ բարեկամությունը մեզ խիստ անհրաժեշտ է: Լեռնից մինչև Պուտին, ներառյալ Ստալինն ու խորհրդային քաղաքականությունը, ի վսաս Հայաստանի միշտ աշխատել են Թուրքիայի ու Ադրբեջանի օգտին:

Ռուս խաղաղապահների ներկայությունը, որ վերջին պահի, բայց նախապես ծրագրված գործողություն էր, որբանով ունի զայից դեռ, նույնքանով էլ ապահովում է Ռուսաստանի շահը, որովհետև իր ներկայությունը Այսրկովկասում կորցնելով՝ կկորցնի ամբողջ Հարավային Կովկասը: Ռուսաստանի երկրորդ քաղաքականությունը՝ Հայաստանը մեր դաշնակիցն է, Ադրբեջանը՝ բարեկամը, Թուրքիան՝ ռազմատնտեսական գործընկերը՝ ուղղված է Հայաստանի դեմ և պետք է վերանայվի:

Պատմությունն առաջ է նայում, պատմագրությունը՝ ետ: Պատմաբանները, տողատակի հարյուրավոր ծանոթագրություններով, բարեխղճորեն իրենց գործը կանեն, իսկ պատմությունը պետք է ժողովուրդը կերտի պետության միջոցով:

Եվ այսպես՝ մեզ հայտնի է՝ թե որտեղի՞ց ենք գալիս և ո՞վ ենք մենք: Բայց մեզ՝ հայտնի չէ, թե ո՞ր ենք գնում: Տեսական պատրանքները բախվում են մի ուժի, որը կոչվում է պե-

տության կառուցում, ուժեղ տնտեսություն, ազգային համախմբում, բարձր գիտություն ու մշակույթ, մրցունակ կրթություն, միաբան հոգեկերտվածք, որոնք պետք է կարողանալ ստեղծել: Այդ նախադրյալների առկայությամբ է, որ առաջնային են դառնում ռազմական ուժը և ճկուն դիվանագիտությունը: Ռազմական ուժի առումով միշտ ուժեղից ուժեղը կա: Այնպես որ՝ գոնե վերջին պատերազմի փորձով սա պետք է նկատի ունենայ: Գնահատելով Թուրքիայի մի ոտքն այսօր Սիրիայում ու Լիբիայում է, մյուս ոտքը՝ Աֆղանստանում ու Միջին Ասիայում: Իսկ Ադրբեջանը Թուրքիայի մասն է կամ հավելվածը: Մեր աչքի առջև Եվրոպան ծափահարում է Թուրքիային և հերթական 3 միլիարդը հատկացնում՝ իբր սիրիացի փախստականներին պատսպարելու համար: Իսկ Ադրբեջանին ԱՄՆ-ը սատարում է՝ որպես հակաիրանական և խրախուսված գործոն:

Ուժի դիրքից մենք հարևանների հետ խոսել չենք կարող, մնում է՝ դիվանագիտությունը: Իսկ դիվանագիտական հարթակները միշտ այնտեղ է, որտեղ ուժն է: Այստեղ մնում է միայն մի բաց պատուհան, որը տվյալ երկրի ազգային շահն է: Որպես շահառու՝ Այսրկովկասում հանդես է գալիս Ռուսաստանը, բայց որը, Լեռնից սկսած, մեզ միշտ խաբում է: Ահա այս գորոցան հանգույցը պետք է լուծի դիվանագիտությունը, որպեսզի Հայաստանը դուրս բերի ապահով ու բարենպաստ հանգրվան:

Թե չէ՛ այսպես աչից ու ձախից, վերից ու վարից Հայաստանն անընդհատ մասնատելով՝ մենք դատապարտված ենք վերացման:

Ժողովրդական խոսքն ասում է՝ հայի վերջին խելքն իմը լինել: Գնահատելով դարավոր սոսիսը մտել է մեր սահմանը, ամրանում է այնտեղ:

Վերջին խելքի ժամանակն է:  
\* \* \*

Պարտությունն ամենամեծ ճգնաժամն է, որ համատարած ընդգրկում է բոլոր բնագավառները և, առաջին հերթին, յուրաքանչյուրի ազգային ինքնագիտակցությունը՝ ի՞նչ կատարվեց, ինչու՞ այդպես եղավ:

Համազգային ճգնաժամ է բոլոր բաղադրիչներով՝ քաղաքական, տնտեսական, գիտական, կրթական, առողջապահական, կարգային, հումանիտար... և այս ամենը մեծ հաշվով իր մեջ ներառնող մի ոգեկերտիչ բնագավառի, որ կոչվում է մշակույթ: Մշակութային ճգնաժամից էլ սկսված է առումով վերջնական անկումը, որովհետև մեռնում է ոգին՝ ազգային գոյի հիմքն ու նախահիմքը: Իսկ ոգու անպարտության դեպքում ոգևորությունները հարթահարելի են, որ հուշում է «Ելից գիրքը»:

Մշակույթն իր մեջ ընդգրկում է արվեստի բոլոր բնագավառները՝ և՛ ժամանակային, և՛ տարածական, և՛ համադրական: Իսկ արվեստների մայրը գրականությունն է:

Գրքեր տպագրվում են, բայց չեն դառնում հոգևոր համախմբման նախադրյալ: Լավ գրքերն անգամ լավագույն դեպքում մտավոր մի փոքր շրջանակի սեփականություն են: Անկախության առաջին տարիներին ընտանեկան հպարտություն համարվող գրադարանների գրքերը շատերը թափեցին փողոց, որ նշանակում էր՝ այլևս պետք չեն: Հաջորդեց ուղեղների լվացումը: Ընթերցողն հեռացավ գրականությունից նաև այն պատճառով, որ «անկախ» և «ազատ» գեղարվեստը աստիճանաբար կորցրեց իր առաջատար դերն ու նշանակությունը, դադարեց հանրային մտքի վրա ներգործող առաջատար ուժ լինելուց: Իսկ ինքնանպատակ արվեստը սուկ գեղամուկ է, «պարսպ վախտի խաղալիք»: Դատարկվեցին թատերասրահներն ու երաժշտասրահները, լավագույն դեպքում դեպքից դեպք հանդիսականի նվազ ներկայություն: Կինոարտադրությունը վերացավ, և այսօր հեռուստաալիքները, մեկը մյուսի ետևից, կրկնում են խորհրդային տարիներին «Հայֆիլմի» թողարկումները:

Ամենակարևորը՝ վերացավ մշակութային միջավայրը, և հայտնվեցին հոգևոր անապատում: Ոմանք սկսեցին բարկոծել ազգային արժեքները և բարոզեցին հոգևոր ու մտավոր ապականություն: Մտահոգ մարդն ինքն իրեն ասաց ու բարձրաձայն կրկնեց՝ դեպի ո՞ր, Հայաստան...  
Դեպի ԼԳԲՏ-ի քարոզ, դեպի «Հուզանք ու գանգ», դեպի «Հայ գրականություն» դասագրքի վրայից «Հայ» բառի վտարում: Որոշակի ուղղորդումով ապագայնայնացման այս ծրագիրն էլ կտրեց հայոց ոգին,



# Վերին Խոտանանում նշվեց գյուղի օրը

Սուրբ Մովսես Խոտանանցու մահվան օրը՝ մայիսի 14-ին, Վերին Խոտանանցիները գյուղովի հավաքվում են, նաև լինում են հյուրեր տարբեր բնակավայրերից: Միասին նշում են գյուղի համախմբման տոնը, որն ուղեկցվում է բազմաթիվ միջոցառումներով:

Այս մայիսի 14-ին գարնանային եղանակը տրամադրող էր, գյուղն ու շրջակա բարձունքները, հարթությունները պատված էին զմրուխտ կանաչի՝ տարվա ոչ մի ժամանակ չհանդիպող երանգով:

Տոնակատարության մասնակիցները

Նախ հավաքվում են գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցում: Ժամը 11-ին Կապանի հոգևոր հովիվ տեր Խաչատուր քահանա Յայրապետյանը պատարագ է մատուցում ի հիշատակ Մովսես Խոտանանցու:

Պատարագից հետո եկեղեցու մոտ տոնակատարության մասնակիցներն ունկնդրում են Տաթևի վանական համայնքի «Տաթևի զանգակներ» երգչախմբի կատարումները (գեղարվեստական ղեկավար՝ Լուսինե Սարգսյան): «Տաթևի զանգակները» հավաքական երգչախումբ է՝ կազմված Տաթևի վանքի հարակից գյուղերի շնոր-



հալի երեխաներից: Այս անգամվա ելույթին ընդգրկված են խմբի՝ Շինուհայրի դպրոցի աշակերտները: Ջնջում են հոգևոր երգեր և ժողովրդական երգերի մշակումներ՝ մանկական երգչախմբի համար:

Գյուղի համախմբման օրը ոգեկոչման արարողություններ էր ներառում: Տոնախմբության մասնակիցները շարժվում են դեպի գյուղի հուշահամալիր և ծաղիկներ խոնարհում Յայրենական մեծ պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնող հուշակոթողին: Հարևանությամբ ամփոփված է 44-օրյա պատերազմում զոհված Ալեն Բեգլարյանի աճյունը: Մերօրյա պատերազմի նահատակի հիշատակին ևս հարգանքի տուրք մատուցվեց:

Հաջորդ հանգրվանը գյուղի գերեզմանատունն էր, որտեղ հավերժական բնով ննջում է Լճեղի գինակից, Սիսիանի գորբերի հրամանատար Պողոս Տեր-Դավթյանը, ում շիրմաքարը ևս պատվում է ծաղիկներով:

Վերին Խոտանանի ականավոր զավակի անունը կրող դպրոցի բակը տոնախմբության հիմնական միջոցառման անցկացման վայրն էր: Խոտանանցիներն ըստ պատշաճի պատրաստ էին գյուղական բարիքներով հյուրասիրելու հյուրերին: Առանձին տաղավարում ներկայացված էին նորաստեղծ «Հմուտ ձեռքեր» խմբակի աշխատանքները: Այնուհետև հնչեցին օրվա խորհրդին պատշաճով ելույթներ: Համայնքի վարչական ղեկավար Ռաֆայել Գրիգորյանը տանտիրոջ իրավունքով բարեմաղթանքներ հղեց տոնախմբության մասնակիցներին, ուրախ ժամանց մաղթեց և կրկին հիշեցրեց գյուղի ծնունդ անվանի մարդկանց:

Գյուղի անցած ուղին պատմական անդրադարձերով և համայնքին առնչվող ուշագրավ իրադարձություններով ներկայացրեց գյուղի կրթօջախի գործարանավարուհի Աննա Մարտիրոսյանը: Պողոս Տեր-Դավթյանի շառավիղներից Արմեն Սողոմոնյանը ներկայացրեց մեծ գորահրամանատարի գերդաստանը, նրա ռազմական գործունեությունը Սյունիք-Չանգեզուրի ազատագրության համար, հերոսական մահը և գերեզմանի հետ կապված ողիսականը: Դպրոցի տնօրեն Խաչատուր Բաղդասյանն իր խոսքում արժևորեց Մովսես Խոտանանցու վաստակը, անդրադարձ կատարեց նրա եկեղեցաշինական և հայրենասիրական գործունեությանը:

Կապանի համայնքի տեղակալ Գոռ Թադևոսյանը, շնորհավորելով ներկաներին հիշարժան օրվա առթիվ, տեղեկացրեց, որ Կապանի համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանի նախաձեռնությամբ, Պողոս Տեր-Դավթյանի հիշատակը հավերժացնելու նպատակով մարզկենտրոնում կառուցվում է պուրակ, որտեղ տեղադրվելու է գորահրամանատարի կիսանդրին: Գյուղի օրը երաժիշկական ժամանցային ուրախ ծրագրով: Այն լիարժեք դարձրին Կապանի մշակույթի կենտրոնի, «Դայմնուր» պարային համույթների, երաժիշտ-կատարողների, երգիչ-երգչուհիների ելույթները և ամենավերջում միասնական շուրջաքարը:

**ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵՆՅԱԼ**

ինչին հաջորդեց ամոթալի ու խայտառակ պարտությունը: 1988 թվականի հոգևոր վերելքը, Արցախի ազատագրումը դեռևս պահպանում էին ազգային ինքնության, պետականության կայացման, ժողովրդի համախմբման-միավորման տեսլականը: Պարտությունը պատրանքաբանի արեց բոլորին, խորացավ հիասթափությունը, և հերթական անգամ թափ առավ արտագաղթի ալիքը...

Դատարկվում է Երկիր Նահիրին: Այսպես դեպի ո՛ր, Յայրաստանը: Մի՞թե Յայրենիք ասածը, իրոք, այդքան վատն է, որ յուրաքանչյուր հեռացողի ետևից բազում ասում են՝ գնաց փրկվեց, և միայն սակավք են ցավով հառաչում ափսոս...

Գնաց փրկվեց, որ ետադարձ իմաստով նշանակում է՝ մնացողները դատապարտված են: Դատապարտված են ինչի՞ ազգային պատկանելությանը, որ հայ են ծնվել և ոչ թե տունգու, և հայ արժեքների պահպանում են, թե՞ դատապարտված են իշխանություններին, որ անկախության 30 տարիներին Յայրաստանը չկարողացան դուրս բերել զարգացման ճանապարհ, իսկ եղած տնտեսական համակարգն էլ բանդեցին:

Ո՞րն է ելքը «Այս խորշակայ, անդուռ Արարատյան դաշտում» (Եղիշե Չարենց): Ելել է հերթական հերոսացման պահը, երբ համաշխարհային բաց ու հարածուն մրցակցության մեջ պետք է հայրտանանք մեր ազգային պատկանելությանը, մեր ազգային արժեքներով, մեր չբեռնալ հայրենիքով և պայքարենք նրա համար:

Խորացած ճգնաժամը ելք է որոնում: Դժգոհությունը հայտնելու համար ընդդիմադիրները դուրս են գալիս փողոց՝ երթեր, ցույցեր, ճառեր, ինչ-որ բան փոխելու հույս, ոմանք նույն այդ հույսով նոր տեսլականներ են բարոզում, բայց կյանքը չի փոխվում. հուսահատ նահիրցու դեմքին լույսի շող չի ճառագում, միայն՝ դժգոհություն, բողոք, վիրավորանք, անբավարարվածություն...

Ամենօրյա լուրերը սև են՝ տարածքային կորուստներ, գերեզմաններ, սահմանային միջադեպեր, ձերբակալություններ, դատավարություններ, դատարկ խոստումներ, 2050 թվականի անհիմն տեսլական ու տեսիլներ, պետական մենաշնորհի դարձած ստախոսություն... Այս ամենը լսել և այս ամենին

դիմանալը հեշտ չէ, և սկսվում է խոր հիասթափությունը հաջորդող անտարբերությունը: Մանավանդ որ թագավարակով հիվանդացածների թիվն օրավոր աճում է, և շատանում են մահերը: Այս ցուցանիշով տոկոսային հարաբերությամբ մենք ինչ աշխարհում ամենաառաջիններից ենք, այսինքն՝ ամենահետիններից մեկը: Անձնական ապահովությունը վտանգվելու հետ մեկտեղ մարդը փոխվում է:

Վտանգված են ազգայինը, պետականը, ավելանում է նաև անձնականը՝ առողջակալը: Երբեք ամեն ինչ այսքան ճգնաժամային չի եղել: Ելք են որոնում բոլորը:

Բայց ելքը հայրենիքից փախուստը չէ, այլ մնալն ու ապահովության համար պայքարելը: Փախուստը ազգային կերպարի վերջնական կորուստն է մեկ-երկու սերունդի ընթացքում, որ նշանակում է՝ հազարամյակների ընթացքում ամեն տեսակի փորձություններից փրկված, սերնդից սերունդ փոխանցած ազգային տեսակի կորուստ, որ նույն դասաբուխությունն է, այսինքն՝ դավաճանությունը: Սա մեղադրանք չէ, այլ ինքնագիտակցության գալու կոչ: Այս ի՞նչ էք անում, հայեր: Իսկ գիտե՞ք արդյոք, որ արտագաղթը խթանող թուրքական ծրագիր կա, որ իրականացվում է ուրիշ երկրներում գործող կազմակերպությունների միջոցով:

Ուրեմն՝ դեպի ելք: Իսկ ո՞րն է ելքը՝ առաջին հերթին ազգային ինքնագիտակցությունն ու համախմբումն ազգային արժեքների շուրջ, որպեսզի հայոց հունը չքրվի աշխարհի բացերում և օտար դաշտերում չկորչի, ինչը և պիտի տա դարավոր հարցի պատասխանը՝ ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս և ո՞րն ենք գնում...

Նորից դառնանք մեզ և նորից մտաբերենք, թե ո՞վ ենք մենք: Մենք նախապատմական ժամանակներից եկող հնդեվրոպական ծագում ունեցող ժողովուրդ ենք: Որպես Թորգամա Տուն, Յայոց Գունդ մեր գրանցումն ունենք Աստվածաշնչում, իսկ դրախտի չորս գետերն անցնում էին մեր հայրենիքի տարածքներով, որտեղից էլ՝ ոգեշունչ խոսքը՝ «Յայաստան, երկիր դրախտավայր, // Դու մարդկայնո ցեղիս օրրան» (Յովհան Կանանդեցի): Մեր Չարմայր Նահապետը մասնակցել է Տրոյական պատերազմին: Մենք ստեղծել ենք մեր պետությունները՝ Արարատի Երկիր,

Երվանդունիներ, Արտաշեսյաններ, Արշակունիներ, Բագրատունիներ, Արծրունիներ, Կիլիկիա... Յետ պետականության բացակայությանը փոխարինած դարերի խավարն է, որ փորձեց «լուծել հյուսիս մեր արյանը» (Եղիշե Չարենց): Բայց ազգային գաղափարախոսությունը նորոգեց ու ոտքի կանգնեցրեց ժողովրդին, որ ցեղասպանության ու պատերազմների միջով անցնելով, վերականգնեց իր պետականությունը: Մենք այսօր պետականության տեր ենք, որը պիտի փայտայնեք, ամեն ինչ անենք չկորցնելու համար: Իսկ դրա համար մեզ անհրաժեշտ է ազգային առողջ գիտակցություն, որի գլխավոր բաղադրիչներն ազգային արժեքներն են և, առաջին հերթին, հայ մշակութային ժառանգությունը:

Եվ ահա, մշակութային ոլորտում ճգնաժամից ելք որոնելու նպատակով ստեղծվում է Լորի հիմնադրամ, որն էլ պետք է հրատարակի իր ամսագիրը: Նշանակությունն այն է, որ մշակույթը պետք է դառնա ազգային ոգեհանուն մի պատգամախոս, դեսպան և նպաստի մեր ոգեկերտվածքի պահպանմանն ու առաջընթացին:

Շատ են համաշխարհայնացման մարտահրավերները, մշտապես լարված են աշխարհի բաղաբալան հարաբերությունները, բայց մենք պարտավոր ենք դիմագրավել, որպեսզի ոտքի կոխան չդառնանք: Մեծ գերտերություններին, որոնք որոշում են աշխարհի բախտը, պետք են ոչ թե ինքնիշխան, զարգացող ամուր պետություններ, այլ պետություններ, որոնք ընդամենը մարտավարական և ռազմավարական նշանակության տարածքներ են, այլ կերպ՝ սպառնալից շուկա, ճանապարհներ և ռազմական հենակետեր: Այստեղ է, որ իր ձայնը պետք է հնչեցնի դիվանագիտությունը, որը չունենք: Դիվանագիտությունը արտաքին աշխարհի համար, մշակույթը՝ ներքին և արտաքին:

Եվ այսպես՝ մշակույթով ելք ճգնաժամից: Ջնարավորն է: Ջնարավոր է այնքանով, որքանով կործին մշակութային ինքնագիտակցությունը, որի նախապայմանը բարձր մշակույթն է որպես միաբանության միջոց: Ինքնանպատակ մշակույթ, ինքնանպատակ արվեստ գոյություն չունի, իսկ նպատակը արդիականության թելադրանքով պայմանավորված գեղեցկության հայտնաբերումն է, որ ննջում է բառի, հնչյունի, գույնի, պարի մի շարժումի

ներսում:

Բարձր մշակույթ, որ նշանակում է գրագետ և բարձրաշխարհիկ հայոց լեզու և ոչ թե համատարած գրեհկաբանություն: Պետական ասանակներին նման այսօր ամենից ավելի վտանգված ու վթարված է հայոց լեզուն՝ գրական հայերենը, որ անգամ հեռուստաթերթում դարձել է շուկայի լեզու: Սա ևս ազգային բարձրագույն արժեքը՝ մայրենի լեզուն, նվաստացնելու, նսեմացնելու, ժողովրդի աչքից զցելու և օտարախոսի մղելու միջոց է:

Ընկել է արվեստի գլխավոր հարցադրումը՝ մանավանդ այսօր ի՞նչ է ասում, ի՞նչ պատգամներ է հղում: Կրկնում եմ՝ ինքնանպատակ արվեստ չի եղել և չի լինելու: Իսկ եթե համոզեն, թե կլինի, ուրեմն արվեստ չէ, այլ տնայնագործություն, կեղծիք՝ թթված մածուկ, որ ներկայացնում են որպես սերունդ: Դրա համար պետք է բարձր արվեստով կրթված ճաշակ, որպեսզի իսկականը տարբերի անիսկականից: Իսկ մեր շուրջը համատարած ռաբիս է: Բարձր արվեստը արվեստագետի պատասխանատվությունն է պետականություն ստեղծելու, պահպանելու, կառուցելու և զարգացնելու գործում: Հապա մի փորձեք V դարից շնչել Մաշտոցի, Խորենացու և Ոսկեդարի մյուս ոսկե տղաների անունները. եթե փորձեք, դարը երկրաշարժի կենթարկվի, կխարխվի ու կավերվի: Հապա փորձեք XVII-XIX դարերից շնչել Մխիթարյանների, Աբովյանի, Նալբանդյանի, Բաֆթու անունները՝ կրկնվենք պետականություն վերակերտած ազգային գաղափարախոսությունից, կհայտնվենք դարերի խավարի մեջ, որտեղ օտարներից միայն ոգու լույս են հայցում: Նույն կերպ XX դարում հայրենիք ու պետություն կերտող անուններ են Թումանյանը, Կոմիտասը, Սարյանը, Թամանյանը, Տերյանը, Չարենցը, Խաչատրյանը և հայրենի մյուս հանձարները:

Այսօր, ահա, արվեստի այս ոգեզոյացման ժամանակն է՝ նոր պահանջների թելադրանքով, որ ներկայացնում են Յայոց աշխարհը, Յայ մարդը և Մեծ աշխարհը: Բարձր մշակույթը կնպաստի վերականգնելու հայ ժողովրդի ոգին, հայ լինելու, հայ ապրելու արժանապատվությունը:

Չմոռանալե՞ք «Մշակույթը բանակ է» (Հակոբ Օջական):

26. X. – 31. X. 2021



# Հավերժ փառք Արցախյան պատերազմում նահատակված հայոց բազորդիներին



## Իգոր Գաբրիելյան. 44-ամյա կյանքը՝ 44-օրյա պատերազմին

Իգոր Գրիշայի Գաբրիելյան, ծնվել է 1977 թ. հունիսի 28-ին՝ Բաբվում: 12 տարեկան էր, երբ 1989-ին գաղթեցին արևախում Բաբվից ու հանգրվանեցին Սիսիանի Շաբե գյուղում: Իգորը Բաբվում հաճախել էր սպորտի խմբակ, թեթև ատլետ էր, հաջողությունների էր հասել, բայց ամեն ինչ թողնեցին «Էնտեր», և շաբեցի մյուս «փախստականների» հետ նա էլ հաճախեց Սիսիանի ռուսական դպրոց, սովորեց, ավարտեց: 1995-97 թթ. ծառայեց հայոց բանակում, հենց Արցախում, Կովսականի (Չանգեյան) սահմանապահ զորամասերից մեկում, դիպուկահար էր: Չորացրվելուց հետո ամուսնացավ, ուներ չորս երեխա:

2001 թ. պայմանագրային ծառայության էր անցել Սիսիանի զորամասում, լրանում էր նրա ծառայության 20 տարին, և շուտով պիտի զինվորական թաշակի անցնե: Այդ ընթացքում մի անգամ դուրս է եկել ծառայությունից, երկու տարի աշխատել Ռուսաստանում, բայց վերադարձել է 2015 թ. Նորից ծառայության անցել Սիսիանի զորամասում: 2020 թ. հոկտեմբերի 8-ին իջել են Սիսիանի դիրքերից և մեկնել Արցախ: «Ամեն օր գանգե, խոսել է, ասել է՝ ամեն ինչ լավ է, վատ էլ լինել, Իգորը էնպիսի բնավորություն ուներ, որ երբեք չէր ասի՝ վատ է: Միշտ ասում էր՝ ձեզ լավ կայեք: Վերջին անգամ գանգել է հոկտեմբերի 14-ին՝ Յադրուբոց... Հոկտեմբերի 15-ից հետո էլ գանգ չենք ստացել...», - ասում է Իգորի հայրիկը՝ Գրիշան: Ու հետո ահավոր ծանր ու դժվարին յոթ ամիսներ, որի ընթացքում փնտրել են որդուն... Արդեն գիտեին, որ զոհվել է, բայց գոնե աճյունը գտնեին, հողին հանձնեին... Յոթ ամսվա փնտրությունից հետո 2021 թ. մայիսի 14-ին եղբորորդին լուր է տվել, Իգորի աճյունը Գորիսում է:

Չինակցի ընկերները պատմում են, որ Իգորն ընկերոջ հետ վիրավորվել է, անշարժացրել են նրանց վիրավոր ոտքերը, մի 10 կմ իրենց հետ տարել այլ վայր, մեկին դրել են նրա աջ ոտը մեքենայում, վերադարձել, որ Իգորին էլ տանեն, անօդաչուն արդեն երկրորդ հարվածն էր հասցրել...

Իգորի զոհվելուց ուղիղ յոթ ամիս հետո՝ մայիսի 15-ին, նրան հուղարկվորեցին Սիսիանի պանթեոնում...

Ծառայության ընթացքում մարտական պատրաստության և զինվորական կարգապահության բարձր ցուցանիշների համար Իգոր Գաբրիելյանը պարգևատրվել է ՀՀ ՊՆ և Ն զորամասի պատվոգրերով, շնորհակալագրերով, շքանշաններով, իսկ հետմահու՝ ՀՀ Նախագահի հրամանագրով՝ «Մարտական ծառայություն» մեդալով:



## Արամիկ Դանիելյան. անպարտ հետախույզը

Արամիկ Կամոյի Դանիելյան, ծնվել է 1991 թ. մարտի 25-ին՝ Տեղ գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է գյուղի դպրոցում: Մանկուց սիրում էր ռազմական գործը, դպրոցական միջոցառումների ժամանակ հայրտույզային էր կրում զինվորականի հագուստը: 2009 թ. զորակոչվել է պարտադիր զինվորական ծառայության, ծառայել է Արցախի Հանրապետության մայրաքաղաքում Ցորի զորամասում:

Չինվորական եղբուհ տալու օրվանից խոստացել էր անձնվիրաբար ծառայել հայրենիքին և չինայել կյանքը: Երբում, որին հավատարիմ մնաց...

Կինը՝ Մարիանան, համատեղ անցկացրած տարիների մասին վերհուշն այսպես է սկսում. «2012 թ. տեր ու հնազանդ լինելու երդումներ տալով՝ ամուսնացանք: Սկսվեց մի նոր կյանք: Ես կատարյալ չեմ, նա՛ նույնպես, բայց սերը կատարյալ է: Հենց այդ բարձր զգացմունքն էր, որ մեզ ամեն օր ավելի կատարյալ էր դարձնում: Սերը դաստիարակում է, հնազանդեցնում... Արամը զինվորական էր, զինվորական կյանքը բավականին փոխել էր նրան՝ լրջացրել: Նրա հայացքները կյանքի նկատմամբ փոխվել էին: Տուն հոգևոր էր վերադառնում, բայց փորձում էր պահել ընտանեկան անդորրը: Ուշադրությունը եռապատկվեց, երբ ծնվեց մեր առաջնեկը՝ Նարեն: Արդեն հետախույզ էր, անասելի զբաղված, բայց ամեն ինչ անում էր, որ ինձ միայնակ չզգամ:

2015 թ. ծնվեց մեր երկրորդ դուստրը՝ Լանեն: Իրեն փորձառու հայրիկ էր համարում:

Նա հպարտությամբ էր խոսում իր զինվորական լինելու մասին, և էլ հպարտությամբ էր կրում նրա կինը լինելու պատիվը: Իրական հպարտություն էր ասարել մեկի կողքին, ով վախեր չուներ, ումից վախենում էր թուրքը: Երջանկությունն այլ կերպ չի լինում, այո, երջանկի էինք...

Եկավ անիծյալ սեպտեմբերի 27-ը:

Այդ օրվա տազանայն առաջին պահին որպես սովորական ընդունեցի՝ կյանքիս անհաշվելի տազանայնեցի մեկն էր:

Պատերազմ..., ու բարանում էր հայացքս, վախը բայթայում էր ներսս: Անընդհատ կորցնելու վախ, ցատում, անհանգստություն, որ փարստանք չունի, սևեռված հայացք ու աղիտորդ խնդրանք, որ այս անգամ էլ հետ գա: Ամեն անգամ գլուխս բարձին ղնելիս կյանք էմ խնդրել: Հավիտենությունը երկուսիս համար միաժամանակ միասին էմ ուզել, որովհետև միշտ վստահ էմ եղել, որ կկործանվեմ առանց նրա: Միշտ էմ զգացել, որ գոյությանս միակ երաշխիքն է:

Արամիկ զոհվելու մասին լուրը կայծակնային արագությամբ տարածվեց Գորիսում: Նա անպարտելի էր, իմ անպարտ հետախույզը, ում կինը լինելու հպարտությունիցս մի կաթիլ անգամ երբևէ չպիտի պակասի...»:

Արամիկ Դանիելյանը նահատակվել է 2020 թ. սեպտեմբերի 30-ին: Հերոսի աճյունը հողին է հանձնվել 2021 թ. հունվարի 10-ին՝ Գորիսի նորահիմն զինվորական պանթեոնում: Հետմահու պարգևատրվել է «Արիության» մեդալով:



## Հովհաննես Խաչատրյան. նա այլևս լուսապսակ բարձունքներում է

Մի օր իմ դասարան մտավ արտահայտիչ աչքերով, վառ շրթունքներով, զարմանալի գրավիչ ժպիտով մի փոքրիկ: Ծանոթացանք, միանգամից յուրօրինակ երանգ հաղորդեց դասարանին, դարձավ բոլորիս սիրելին՝ մեր Հովնո: Անչափ բարի, սիրում էր երգել, հիանալի կատարում էր իր դերը բեմում, օգնում էր բոլորին...

Ների, տղաս, եթե ինչ-որ վարժություն կամ խնդիր լուծել էմ պարտադրել, ցանկացել էմ, որ ավելի սովորես, բայց ես բեզ ներարել էմ սիրելու արվեստը, իսկ բեզնից ինձ է մնացել մի պտուղնեց բարություն: Անհնար է պատկերացնել, որ չկաս, որ միացել ես բաջերի աստղաբային ու դարձել կենդանի պատմություն:

Հովհաննեսը ծնվել է 2000 թվականի դեկտեմբերի 16-ին Կապանի Աշոտական բանակում: Թիվ 2 գիշերօթիկ դպրոցում առաջին դասարանն ավարտելուց հետո տեղափոխվել է Կապանի թիվ 1 դպրոց, ավարտել և կրթությունը շարունակել Կապանի ճարտարագիտական թղթում կապի բաժնում:

2019թ. հունվարի 13-ին զորակոչվել է հայկական բանակ: Ծառայության անցավ Հայրուբի առաջին պաշտպանական գնդում: Անմիջապես աչքի է ընկնում պարտաճանաչությամբ, տոկոսությամբ, ֆիզիկական պատրաստվածությամբ: Գործուղվում է Հոկտեմբերյանի ռազմաուսումնական զորամաս, երկու ամիս հետո վերադառնում իր զորամաս՝ որպես սերժանտ: Անմիջապես կարգվում է դիրքի ավագ:

2020թ. սեպտեմբերի 27-ից պատերազմի առաջին գծում է հայտնվում: Հայրուբի շրջափակումից դուրս գալով՝ մի գիշերվա մեջ անտանդերով 50 կմ անցնելով՝ հասնում են Մարտունու շրջան, դիրքավորվում: Կարողանում են դիմագրավել և հետ չարտել թշնամու ութ տասնյակից ավելի ասկյար ունեցող ջոկատին: Պատերազմական թեժ իրավիճակում նրան նշանակում են դասակի հրամանատարի տեղակալ: Մարտերի ընթացքում ոտքից վիրավորվում է, սակայն չի թողնում դիրքը, ընկերներին:

2020թ. նոյեմբերի 10-ին, հրադադարի օրը, դիրքերի հրետակոծման ժամանակ, Հովիկը և հրամանատարը զոհվում են...

Շատ էր խոսում ծնողների հետ, ոչնչից չէր դժգոհում: Փռչմանել էր, որ չէր արժևորել սովորելը, ասում էր, որ ծառայությունից հետո կուղղի այդ սխալը: Հայրը պատմում է, որ ուրախությամբ է զորակոչվել բանակ, նույնիսկ չի հայտնել վիրավորվելու մասին: Երբ հարցրել է, թե չի՞ վախենում, զարմացել է՝ ինչի՞ց պիտի վախենամ: Մարտական ընկերները պատմում են նրա խիզախության, ընկերասիրության մասին: Ամենադժվար պահին անգամ կատակում էր: Ասում են, որ շրջապատը համոզվածուղ տղա էր Հովնո:

Հովհաննեսը լուսապսակ բարձունքներում է, միացել է հավերժի ճամփորդներին: Կկարողանա՞ր այնպես ապրել ու արարել, որ արժանի լինենք նրանց...

### ԼՈՒՍԻՆԵ ԲԱԼՆԱՆ

Հ.Գ. Հովհաննեսը հուղարկվորվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում:



## Գարիկ Պապյան. բաջարանցի նահատակը

Պապյան Գարիկ Արմենի. ծնվել է 1987 թ. հունվարի 27-ին Քաջարանում: Սովորել է Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցում, ապա ուսումը շարունակել է Կապանի պետական թղթի «Տրանսպորտի կառավարում» բաժնում: 2005-2007 թթ. ծառայել է Հայոց բանակում: Աշխատում էր Չանգեյանի պղնձամոլիբդենային կոմբինատում: Ամուսնացած էր, ունի երկու զավակ:

Հայոց աշխարհում տղամարդը ռազմիկ է ծնվում: Ռազմիկ, ով պիտի խաղաղության ամեն օրն օգտագործի բարիք ստեղծելու, ընտանիք կազմելու, իրենից հետո անուն ու ժառանգներ թողնելու համար: Գարիկն էլ բացառություն չէր. մանուկ տարիներին էր տեսել պատերազմը, գիտեր խաղաղության գիտը, գիտեր նաև, թե ինչ է նշանակում թուրքի հարևանությամբ ապրելը: Գիտեր, որ պարտադիր է թուրքին կանգնեցնել, բանգի նրանց հիվանդ երազանքներում Այոնիքն է, որին տիրելու հարյուրամյա մարմաջ ունեն:

Գարիկը պատասխանատու աշխատող էր, հոգատար էր ու ամուսին: Թվում էր՝ ոչինչ չի կարող խաթարել նրա կյանքի երջանիկ ընթացքը, բայց սկսվեց չարաբաստիկ պատերազմը: Սեպտեմբերի 28-ին զորահավաքվել է մեկնել առաջնագծ, մասնակցել ռազմական գործողություններին Ֆիզուլի, ապա Մարտունիի ուղղություններում:

Պատերազմ էր. բաջորդիները մարտնչում էին՝ փրկելու մի բուռ մնացած հայկական հողը, մայրերն ու կանայք՝ աղոթում, երեխաները՝ կարոտում: Նրանք, միայն նրանք, ովքեր ռազմաճակատից գանգի են սպասել, գիտեն այդ գանգի կենսատու գինը, երբ օրը սկսվում է գանգի սպասումով, ավարտվում աղոթքով: Գարիկը վերջին անգամ ընտանիքի անդամների կանգնեցնելու էր հոկտեմբերի 25-ին, գանգից ժամեր անց զոհվել է Մարտունի 2-ի դիրքերում, մարտական գործողության ժամանակ թշնամու անօդաչու թռչող սարքի արձակած հրթիռի պայթյունից:

Գարիկին Քաջարանում բոլորն են ճանաչում, նկարագրում միայն դրական բառերով, շեշտում, որ բաղաբի համար ծանր ցավ էր կորցնել նման զավակին, ծանր է տեսնել Գարիկի որբացած զավակներին:

Գարիկի ու մեր բոլոր նահատակների երեխաները պիտի լավ ապրեն, պիտանի մարդիկ դառնան, որ նրանց հողները հանգիստ լինեն, որ մենք էլ մեզ շարունակենք մարդ համարել, բանգի նրանք զոհվել են, որ մենք խաղաղ ապրենք: Ոչ մեկը չի մոռացվելու, նրանք անմահ են...

Ամահացած Գարիկ Պապյանի աճյունն ամփոփվել է Քաջարանի զոհված ազատամարտիկների հուշահամալիրում 2020 թ. հոկտեմբերի 30-ին:

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

### ԷՃԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ ՄԱՐԻ ՆԱՎԱՍՏՐԻԱՆԸ

||

### Մեկնարկում է ատեստավորման հայտերի ընդունելությունը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը 2022 թվականի մայիսի 16-ից մինչև հունիսի 7-ը հայտարարում է հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների կամավոր ատեստավորման հայտերի ընդունելությունը:

2022 թվականին ատեստավորումը կիրականացվի 5-12-րդ դասարաններում բոլոր առարկաները դասավանդող ուսուցիչների համար: Անկախ դասավանդած առարկաների քանակից՝ ուսուցիչը կարող է ատեստավորման հայտ ներկայացնել միայն մեկ առարկայից՝ իր ընտրությամբ:

Ատեստավորմանը մասնակցելու համար ուսուցիչները մինչև հունիսի 7-ը՝ ժամը 18:00-ը, հայտերը պետք է ներկայացնեն «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ»-ի էլեկտրոնային մատչելի՝ matyan.emis.am: Հայտարարությամբ նշված ժամկետի ավարտից հետո հնարավոր չի լինի հայտ ներկայացնել, քանի որ էլեկտրոնային համակարգում նշման հնարավորությունը փակվելու է:

#### ԱՆՈՒՐՎԱԿՆԵՐ

«Մայրենի», «Հայոց լեզու», «Գրականություն» և «Հայ գրականություն» առարկաները դասավանդող ուսուցիչները ատեստավորվում են միայն «Հայոց լեզու» առարկայից, «Մայրենի լեզու (թղթերեն)» և «Մայրենի լեզու և գրականություն (թղթերեն)» առարկաներ դասավանդող ուսուցիչները ատեստավորվում են միայն «Մայրենի լեզու (թղթերեն)» առարկայից, «Հայոց պատմություն» և «Համաշխարհային պատմություն» դասավանդող ուսուցիչների համար կկազմվի մեկ թեստ՝ ներառելով երկու առարկաները: «Հանրահաշիվ» և «Երկրաչափություն» առարկաները կներառվեն մեկ թեստում:

5-12-րդ դասարաններում դասավանդվող «Մայրենի», «Հայոց լեզու», «Հայոց պատմություն», «Համաշխարհային պատմություն», «Մաթեմատիկա», «Հանրահաշիվ» և «Երկրաչափություն», «Բնագիտություն», «Հայրենագիտություն», «Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն», «Ռուսաց լեզու», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն», «Հայոց եկեղեցու պատմություն», «Ինֆորմատիկա», «Հասարակագիտություն», «Ատրերեն լեզու», «Եզրդիերեն», «Մայրենի լեզու (թղթերեն)» առարկաների ուսուցիչների ատեստավորումը կիրականացվի թեստավորման եղանակով՝ Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից:

«Բնագիտություն» և «Հայրենագիտություն» առարկաները դասավանդող ուսուցիչներն ատեստավորման համար պետք է ընտրեն բարձրագույն կրթության իրենց որակավորմանը համապատասխան առարկան:

«Լաիկական գիտություն» պատրաստություն», «Ֆիզիկատուրա», «Երաժշտություն»

յուն», «Կերպարվեստ», «Տեխնոլոգիա» առարկաները դասավանդող ուսուցիչների ատեստավորումը կիրականացվի ոչ թեստային եղանակով՝ ընդգրկելով գործնական աշխատանքներ, բաց և փակ հարցեր:

«Ֆիզիկատուրա» առարկայից ատեստավորումը կկազմակերպվի «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամը, «Երաժշտություն», «Կերպարվեստ», «Տեխնոլոգիա» առարկաներից՝ «Ի.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը, իսկ «Լաիկական գիտություն» պատրաստություն» առարկայից՝ «Հիրակի Ս. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամը:

«Հայոց պատմություն» և «Համաշխարհային պատմություն» առարկաները դասավանդող ուսուցիչների ատեստավորումն իրենց ընտրությամբ կարող է իրականացվել նաև ոչ թեստային եղանակով՝ ընդգրկելով գործնական աշխատանքներ, բաց և փակ հարցեր: Ատեստավորումն այս դեպքում կիրականացվի ոլորտային մասնագետներից կազմված հանձնաժողովը՝ Ի. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Ուսումնական հաստատությունում նախարարության կողմից երաշխավորված դպրոցական բաղադրիչով առարկաներ դասավանդող ուսուցիչը կարող է ատեստավորվել տվյալ բնագավառի՝ ատեստավորման ցանկում ընդգրկված առարկաներից որևէ մեկով՝ իր ընտրությամբ:

#### ՊԱՅՆՆԱԿԱՆ ՓԱՍՏԱՐՈՒԹԵՐ

Ատեստավորման հայտ ներկայացնելիս պահանջվում է հետևյալ տեղեկատվությունը՝

1. ուսուցչի անուն, ազգանուն, հայրանուն,
2. ուսումնական հաստատության գտնվելու վայրը (մարզ, տարածաշրջան),
3. դասավանդվող առարկան, որից պատրաստվում է ատեստավորվել,
4. անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը,
5. ուսուցչի էլեկտրոնային հասցեն, հեռախոսահամարը:

#### ՀԱՅՏԵՐԻ ԼՈՒՑՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՆԵՐԻ ՀԱՍՏՈՒ ԿԻՑ ՈՐԵՏՈՒՅՑԸ

Գործընթացը կիրականացվի՝ համաձայն ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի «Ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույթաչափի և դրան հատկացվող հավելավճարի սրամարդման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձևավորման կարգը հաստատելու մասին» N 596-Ն որոշման դրույթների:

#### ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

թեր (դիպլոմ, ատեստատ, հավաստագրեր):

Գրանցման մասին զորակոչվող պարտավոր է տեղեկացնել իրենց հաշվառման վայրի տարածքային զորահավաքային ծառայություն (զինվորական կոմիսարիատ): Գրանցված մասնակիցները թեստային հարցազրույցից առաջ պատասխան նամակով կամ հեռախոսազանգով տեղեկանում են թեստային անցկացման տեղի, օրվա և ժամի մասին:

Արդի տեխնոլոգիաների մշակումների խմբում զինվորական ծառայության նշանակվելու նպատակով անցկացվող ընտրությանը մասնակցելու նպատակով չեն կարող հաշվառվել՝

- պաշտպանական մարզատեխնիկական հասարակական կազմակերպությունում պաշտպանության նախարարության պատվերով ռազմահաշվառական մասնագիտություն ստացած զորակոչվածները,
  - ռազմաուսումնական հաստատությունների դիմորդները,
  - հայտարարված շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության գորակոչի շրջանակներում գիտված ուժերի մասնագիտական ստորաբաժանումներում ծառայության նշանակվելու համար անցկացվող այլ մրցույթի մասնակցելու համար դիմած զորակոչվածները
- Մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող զորակոչվածները մինչև 2022թ. հունիսի 19-ը ներառյալ կարող են գրանցվել <https://atmk.mil.am> կայքում:



### Հայտնի են միասնական քննությունների օրերը

ԳՆԱԿԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄՈՏՕՆԻԿ ԻՐԱՄԱՆՈՎ՝ հաստատվել են 2022 թվականի միասնական քննությունների օրերը: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից, համաձայն հրամանի՝ միասնական քննությունների համար, ըստ առարկաների, սահմանված են հետևյալ օրերը.

07.06.2022 թ.	«Կենսաբանություն», «Աշխարհագրություն»,
10.06.2022 թ.	«Օտար լեզուներ» («Անգլ.», «Ֆրանս.», «Գերմ.», «Իտալ.», «Իսպ.»)
14.06.2022 թ.	«Հայոց լեզու և հայ գրականություն»
17.06.2022 թ.	«Մաթեմատիկա»
21.06.2022 թ.	«Հայոց պատմություն», «Ֆիզիկա»
24.06.2022 թ.	«Քիմիա», «Ռուսաց լեզու»

### Առաջին դասարանից սկսվում է կիրականացվի երեք փուլով

ԱՌՆԱԿԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՄՈՏՕՆԻԿ ԻՐԱՄԱՆՈՎ՝ հայտարարվում է այն պետական հանրակրթական դպրոցների համար, որոնք տվյալ բնակավայրում միակը չեն: Գործընթացը 3 փուլով կիրականացվի ԿԳՄՍ նախարարության «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի» կողմից՝ «Սովորողների դպրոց հայտագրելու էլեկտրոնային համակարգի» միջոցով:

#### ԱՌՆԱԿԱՏՄԱՆ ՓՈՒԼ

Հունիսի 21-ից հայտագրումը բաց կլինի արտոնություններ ունեցող բաղադրանքների համար: Որպես առաջնահերթություն դիտարկվում է նույն դպրոցում հայտագրվող երեխայի քրոջ կամ եղբոր սովորելու, ինչպես նաև ծնողի աշխատելու հանգամանքը: Այս փուլով հայտագրումը կիրականացվի 14 օրվա ընթացքում:

#### ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

Հունիսի 6-ից առաջին դասարանից հայտագրման գործընթացը կիրականացվի ընդհանուր հիմունքներով՝ հայերենով ուսուցում իրականացնող հանրակրթական պետական հաստատություններ դիմող բոլոր առաջին դասարանիցների համար:

#### ԵՐԿՐՈՐԴ ՓՈՒԼ

Հունիսի 12-ից հայտագրում կիրականացվի նաև օտարերկրյա բաղադրանքների, երկբաղադրանքների, բաղադրանքային

չունեցողների, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների երեխաների համար՝ իրենց ընտրությամբ ռուսերենով ուսուցմամբ դասարաններում: Այս կարգավորումը տարածվում է նաև այն երեխաների վրա, որոնց ծնողներից մեկը ՀՀ բաղադրանք է, մյուսը՝ ոչ:

#### ՀԱՅՏԱԳՐՈՒՄԸ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԻՑ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

Երկրակ, եռյակ, բառային և ավելի երեխաներից առնվազն մեկի հայտագրումը որևէ հանրակրթական դպրոցում հիմք է նույն հաստատություն մյուս երեխաների ընդունելության համար՝ անկախ լիցենզիայով տրված տեղերի քանակից:

#### ՆԱԽԱՐԱՐՈՒՄԸ ՍՏՈՒՄԵՆԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ԵՎ ԵՐԿՐԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԻՑԻՆ

Որպես հայտագրման նախապատրաստական կարևոր քայլ՝ նախ պետք է ստուգել երեխայի տվյալների ամբողջականությունը: Այս նպատակով երեխայի և ծնողի հանրային ծառայության համարանիշները պետք է մուտքագրել stugum.emis.am համակարգ և հավաստիանայ երեխայի անձնական տվյալների առկայության ու ճշգրտության հարցում: Այս քայլն անհրաժեշտ է բուն հայտագրման գործընթացի ժամանակ հնարավոր խնդիրներից խուսափելու համար:

Ստուգման գործընթացին կարող եք ծանոթանալ նաև պատկերային ուղեցույցի միջոցով:

#### ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ՊՆ-ն հայտարարում է մրցույթ

ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ «Հայտեք» կիբեռնակապակցության կենտրոնի հետ համատեղ, գինված ուժերի կարիքների համար տեղեկատվական հաղորդակցային տեխնոլոգիաների և բարձր տեխնոլոգիաների մասնագետների արդի տեխնոլոգիաների խմբում զինվորական ծառայության նշանակվելու ընտրության նպատակով հայտարարում է մրցույթ:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ մրցույթին կարող են մասնակցել 2022թ.ամառային զորակոչին ենթակա զորակոչիչները հետևյալ մասնագիտություններով՝ ծրագրավորում, ցանցային/համակարգային ադմինիստրացիա, կիբեռնակապակցություն:

Մրցույթին մասնակցելու ցանկություն ունեցող զորակոչիչները գրանցվելիս՝

- Առաջարկվող մրցույթներից ընտրում են ԱՄՍ խմբի համար կազմակերպվող մրցույթը
- Նշում են իրենց մասնագիտական տվյալները ըստ 3 մասնագիտության՝ ծրագրավորում, կիբեռնակապակցություն կամ ցանցային ադմինիստրացիա
- Կցում են անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, ID քարտ կամ, վերջիններիս բացակայության դեպքում, ծննդյան վկայական), ռեզյումե և առկայության դեպքում՝ հավելյալ փաստաթղթեր:

**ԿՈՐԵԼ Է** «Թունել» ՓԲԸ-ին պատկանող 1984 թ. արտադրության էքսկավատորի՝ ԵՕ-5111բ մակնիշի, դեղին գույնի, տեխնիկական վկայագիրը՝ Բ N 018945, շարժիչ՝ 414510, ամրաշրջանակը գործ N 11524, պետհամարանիշը՝ 11.97 LS: Համարել անվավեր:

**ԿՈՐԵԼ Է** «Թունել» ՓԲԸ-ին պատկանող 2007 թ. արտադրության էքսկավատորի՝ ԵԿ-18-20 մակնիշի, դեղին գույնի, տեխնիկական վկայագիրը՝ Բ N 013378, շարժիչ՝ 280014, ամրաշրջանակը գործ N 3035, պետհամարանիշը՝ 8589 SL: Համարել անվավեր:

**ԿՈՐԵԼ Է** «Թունել» ՓԲԸ-ին պատկանող 2007 թ. արտադրության Բուլդոզերի՝ ԵԿ-510M011EH մակնիշի, դեղին գույնի, տեխնիկական վկայագիրը՝ Բ N 013380, շարժիչը՝ 402484, ամրաշրջանակը գործ N 38701, պետհամարանիշը՝ 85-91 SL: Համարել անվավեր:

**ԿՈՐԵԼ Է** «Թունել» ՓԲԸ-ին պատկանող 2007 թ. արտադրության էքսկավատոր Կամացու՝ WB 93 R մակնիշի, դեղին գույնի, տեխնիկական վկայագիրը՝ Բ N 013381, ամրաշրջանակը գործ N 998617, պետհամարանիշը՝ 85-92 SL: Համարել անվավեր:

**ԿՈՐԵԼ Է** «Թունել» ՓԲԸ-ին պատկանող 1983 թ. արտադրության Բարձիչի՝ ԴԴ-5 մակնիշի, դեղին գույնի, տեխնիկական վկայագիրը՝ Բ N 018950, շարժիչը՝ 817832, ամրաշրջանակը գործ N 2409145, պետհամարանիշը՝ 36-74 LS: Համարել անվավեր:

**ԿՈՐԵԼ Է** «Թունել» ՓԲԸ-ին պատկանող 1985 թ. արտադրության Բարձիչի՝ ԴԴ-8 մակնիշի, դեղին գույնի, տեխնիկական վկայագիրը՝ Բ N 018948, շարժիչը՝ 304146, ամրաշրջանակը գործ N 86041011, պետհամարանիշը՝ 36-72 LS: Համարել անվավեր:

**ԿՈՐԵԼ Է** «Թունել» ՓԲԸ-ին պատկանող 2007 թ. արտադրության էքսկավատորի՝ ԵՕ 4225k-07 մակնիշի, , տեխնիկական վկայագիրը՝ Բ N 013379, շարժիչը՝ 70234861, ամրաշրջանակը գործ N 1897, պետհամարանիշը՝ 85-90 SL: Համարել անվավեր:

**ԿՈՐԵԼ Է** «Թունել» ՓԲԸ-ին պատկանող 1990 թ. արտադրության՝ ՍՕԱՁ-7405 մակնիշի, դեղին գույնի, տեխնիկական վկայագիրը՝ Բ N 018947, շարժիչը՝ 786979, ամրաշրջանակը գործ N 765, պետհամարանիշը՝ 3675 LS: Համարել անվավեր:

**ԿՈՐԵԼ Է** «Թունել» ՓԲԸ-ին պատկանող 1990 թ. արտադրության՝ ՍՕԱՁ-7405 մակնիշի, դեղին գույնի, տեխնիկական վկայագիրը՝ Բ N 018946, շարժիչը՝ 803366, ամրաշրջանակը գործ N 769, պետհամարանիշը՝ 11-98 LS: Համարել անվավեր:



# Միջոցառումներ Ակսել Բակունցի տուն-թանգարանում



Կողմից 1955-ին և 1956-ին լույս ընծայված «Ակսել Բակունց. ամբողջական գործը» մատենաշարի Ա և Բ գրքերին: Գրականագետը Լեւոն Սեֆրանյանի Սիմոնյանը Բեյրութում հիմնում է «Սևան» հրատարակչատունը, որը բացառիկ իրագործում է եղել սփյուռքահայ իրականության մեջ: «Սևան»-ը մոտ երեք տասնամյակ ոչ միայն դարձել էր հայ գրքի գլխավոր ծննդատներից մեկը Սփյուռքում, այլև ժամադրավայր հայ գրի ու մտքի մշակների համար, կամուրջ՝ հայրենիքի և Սփյուռքի միջև: «Սևանի» հրատարակչական բերքը եղել է շուրջ 500 տպագրված գիրք, ինչը անգերազանցելի մրցանիշ է: Եվ հատկանշական է, որ «Սևան»-ի երախայրիքը եղիչ է Զարեցի բանաստեղծությունների ստվար հատորն էր, երկրորդը՝ Ակսել Բակունցի ամբողջական գործի առաջին հատորը, որ Սփյուռքում հրատարակվել է, երբ դեռ Բակունցը «արգելված գրող» էր հայրենիքում: Որպես այդպիսին՝ այն անդրանիկ հրատարակությունն է գրողի եղբրական վախճանից հետո:

**1978** թվականից ի վեր «Թանգարանների գիշեր» միջոցառումը համախմբում է աշխարհի 5 մայրցամաքների ավելի քան 30 հազար թանգարանների: Միջոցառումը հնարավորություն է տալիս հասարակությանը անվճար, մի ամբողջ օր՝ երեկոյից մինչև կեսգիշեր, ներգրավվելու թանգարանային անցուդարձին և և՛ նորովի բացահայտելու թանգարաններում պահվող մշակութային արժեքները, հաղորդակցվելու թանգարանային խորախորհուրդ մթնոլորտին:

«Այսօր Բակունցի տուն-թանգարանը պատիվ ու գոհունակություն ունի մշտական ցուցադրությամբ ներկայացնելու այդ բացառիկ հրատարակությունները, որոնք, իրոք, Սիմոնյանի մեծ նվիրումի և Բակունցի՝ «խորունկ, լուրջ, ճարտար ու ճարտարապետող» այդ գրողին ըստ արժանվույն գնահատելու արդյունքն էին, որոնք սփյուռքահայության համար բացեցին Բակունցի խորապես հմայիչ գրաշխարհը, որը դեռ նոր պետք է մաքրագործվեր հայրենիքում»:

Այցելուների համար նախատեսված էր նաև բանախոսություն՝ «15-ամյա Բակուն-



Ակսել Բակունցի տուն-թանգարանը ևս միացավ «Թանգարանների ուժը» խորագրի ներքո անցկացվող համաեվրոպական անցիային՝ այցելուներին առաջարկելով հետաքրքիր ծրագրեր: Գործիս պետական համալսարանի ուսանողների մասնակցությամբ այցելուների, հատկապես դպրոցականների տարբեր խմբերի համար անցկացվեց թանգարանային ինտերակտիվ դաս՝ «Թանգարան այցելելու 10 պատվիրանները» խորագրով: Թանգարանի ֆոնդը համարյա չէր բացառիկ գրքերի՝ Ակսել Բակունցի լիբրանային հրատարակությունների մասին այցելուներին հետաքրքիր տեղեկատվություն տրամադրեց գրականագետ, բ.գ.թ., ողջենտ Թեմիմիա Մարուկյանը՝ Լեւոն Սեֆրանյանի ներուժը այն բոլոր առարկաներն են, արժեքավոր ցուցանմունքները, որոնք որոշակի իրականության վավերագրեր են և վկայություններ: Կոնկրետ դեպքում խոսքը վերաբերում է լիբրանահայ հանրագիտակ մտավորական, խմբագիր, գրող, գրախրատարակիչ Սիմոն Սիմոնյանի հիմնած «Սևան» հրատարակչական տան

ցի նորահայտ պատմվածքը՝ թեմայով, որը դարձյալ ներկայացրեց Թ.Մարուկյանը՝ անդրադառնալով 1914 թվականին Ալեքսանդրապոլի «Նոր ուղի» գրական ավանսխում առաջին անգամ «Բակունց» ստորագրությամբ տպագրված «Դասարանում» վերնագրով պատմվածքին, որը տևապես դուրս էր մնացել ուսումնասիրողների տեսադաշտից՝ որպես գրական երախայրիք: Բակունցը այն ուղարկել է տպագրության, երբ դեռ 15 տարեկան էր և սովորում էր Եջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում: Այդ մասին, սակայն, ևս ինքնակենսագրականում չի ակնարկել: Այցելուների համար ընթերցվեց պատմական անկեղծությամբ գրված այդ գողտրիկ պատմվածքը:

Բակունցի հարկի ներքո երեկոն շարունակվեց ավանդական ինքնաշոքի ու թեյախմության շուրջ՝ համեմված հուշագրույցներով, ընթերցումներով և պարզապես բազմաթիվ այցելուների հետ մարդկային ջերմ շփումներով:

# Արևմուտքի դեսպանների սյունիքյան սեթևեթանքների ուշացած և կասկածելի շքերթը



**Սկզբը՝ էջ 2**

ակնհայտ նպատակ չի հետապնդում: Ոչ պակաս տարօրինակ էր դրվագը, երբ տիկին դեսպանը խորհուրդ տվեց մեզ՝ այդ հարցերով համագործակցել Սյունիքի մարզային լրատվամիջոցների հետ՝ չնչելով Լույսիսկ, թե այդ որոնք են «Սյունիքի մարզային լրատվամիջոցներ» ասվածը. շատ կուզենայինք գոնե մեկի անունը լսել: ԵՄ դեսպանը բառ անգամ չասաց ԵՄ ևս:



Խագահ Շառլ Միշելի մայիսի 22-ի հակաարցախյան և հակահայկական հայտնի հայտարարության վերաբերյալ, երբ ամենաբարձր եվրոգիտակցիկը թեթև էր մեր պատմության ու Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի վրա ու «Արցախի Հանրապետություն» լեգիտիմ արտահայտության փոխարեն գործածել «Հարաբարի էթնիկ հայ բնակչություն» թուրքահնար բառակապակցությունը: Ահա, թե ինչպիսի «բարեկամներ» էին մեզ այցի եկել...

# Նշվեց թանգարանների միջազգային օրը

Օրն այս տարի անցավ «Թանգարանների ուժը» խորագրով, որ հավուր պատշաճի նշվեց մարզկենտրոնում: Կապանի երկրագիտական թանգարանում բացօթյա կազմակերպվել էր «Կապանյան կենցաղն ու ապրելակերպը» թեմայով ազգագրական ցուցադրություն: Թանգարանի տարածքի մի մասը վերածվել էր ազգագրական անկյունի, ազգային հագուկապով աղջիկները լավաջ հաց էին թխում, աղորիք բանեցնում, ազգագրական երգ ու պար ներկայացնում:

Ներկայացվեց օրվա խորհուրդը, մանավանդ այն դերը, որ ունեն թանգարանները պատմական հիշողություն պահպանելու և սերունդներին փոխանցելու գործընթացում: Այնուհետև ներկայերիս՝ տարբեր տարիքի և զբաղմունքի մարդիկ, նաև հայոց բանակի զինվորներ, իրենց խոսքն ու օրհնանքը հղեցին Կապանի և Քաջարանի հոգևոր հովիվներ տեր Խաչատուր քահանա Հայրապետյանը և տեր Հիրակ քահանա Խանոյանը. նրանք կարևորեցին թանգարանների դերը՝ մանավանդ երիտասարդ սերնդի կրթադաստիարակչական գործում, որից հետո համերգային փոքրիկ ծրագրով հանդես եկան Կապանի պետական բժշկական բուժօժիտի սովորողները:

Այնուհետև այցելուները շրջեցին երկրագիտական թանգարանի հնագիտության, պատմության, ազգագրական, 44-օրյա պատերազմին նվիրված սրահներում:

Կապանի արվեստի թանգարանն օրվա առթիվ հատուկ ցուցադրություն չէր կազմակերպել: Մարզկենտրոնի մշակույթի այս օջախը հարուստ ցուցադրություն ունի, և թանգարանի դռները ողջ երեկոյան բաց էին այցելուների համար:

Կապանի Շմավոն Մովսիսյանի անվան պատմության թանգարանի դռները ժամը 11-ից մինչև կեսգիշեր բաց էին. կազմակերպվել էր բանդակագործ Մարատ Նուրիջանյանի աշխատանքների ցուցահանդես: Այցելուների համար համերգային ծրագրով հանդես եկան Կապանի թիվ 1 և 2 երաժշտական դպրոցի սաները՝ իրենց դասատուների նվազակցությամբ, թիվ 7 Նախադպրոցական ուսումնական հաստատության մանուկները: Երեկոյան արդեն դասական երաժշտություն էր հնչում թանգարանում, եղան նաև տեղացի ստեղծագործողների գործերի կատարումներ (երաժշտություն և ասմունք), պարուսույց Թամար Ստեփանյանի սաների կատարումները կատարյալ դարձրին երեկոն:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# Ծանուցում հանրային քննարկման մասին

«Լիճքվագ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ Ձեռնարկող) նախատեսում է ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի տարածքում, 2012թ. նոյեմբերի 22-ին տրամադրված թիվ ԼԿ-293 լեռնահատկացման սահմաններում 2022-2024թթ. ժամանակահատվածում կառուցել լեռնահարստացման ֆաբրիկա (այսուհետ՝ Նախատեսվող գործունեություն):

Նախատեսվող գործունեության նպատակը Լիճքվագ-Թեյի հանքի թերթեռնվածության հաղթահարումը և տնտեսական ներուժի լիարժեք օգտագործումը, հանքաքարի վերամշակման համար օգտագործվող սարքավորանքի և տեխնոլոգիական սխեմաների՝ հանքաքարի բնութագրերին լիարժեք համապատասխանության ապահովումը և շրջակա միջավայրի վրա անցանկալի ազդեցությունների նվազեցումն է:

«Հրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ

օրենքով սահմանված կարգով նախնական փորձաքննության գործընթացի շրջանակներում 2022թ. հունիսի 7-ին՝ ժամը 16:00-ին, ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքապետարանի շենքում (հասցե՝ Չորավար Անդրանիկի 2) ավագանու նիստերի դահլիճում, տեղի կունենա Ծրագրի վերաբերյալ հանրային քննարկում:

Հանրային քննարկումն իրականացնում են Ձեռնարկողը և Մեղրի համայնքի ղեկավարը՝ համատեղ:

Ծրագրի վերաբերյալ տեղեկատվությանը կարող եք ծանոթանալ ստորև: Ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն կարող եք ստանալ նաև այցելելով ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքապետարան՝ Չորավար Անդրանիկի 2 հասցեով, կամ զանգահարելով +374 (286) 4 3423 հեռախոսահամարով կամ գրելով meghri.syuniq@mta.gov.am էլ. հասցեով: Հանրային քննարկումը կարող է գրավոր դիտորդություններ և առաջարկություններ ներկայացնել սույն ծանուցումից հետո 18 աշխատանքային օրվա ընթացքում:

**ՄԵՂՐԻ Ի ԿԱՄԱՆԱԶՆԱԴԵՏԱՐԱՆ**

**Սյունյաց երկիր**

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՄԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏԴԱԳՐՎՈՒՄ Ե 2003Թ. ՀՈԿԵՏԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, բ. Կապան, Շահումյան 20/32:

(+374 91) 45 90 47  
(+374 77) 45 90 47

syuniacyerkir@mail.ru  
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Սյունյաց երկրից մեքենագիր վիճակում:

«ԳՐՎԱԾԴ» - ԾԱՆՈՒՑՈՒՄ բաժնում

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 25.05.2022թ.: